




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ՏԵՂԵԿԱԳԻՐ

2020-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ
«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ
ՀԱՏՈՒԿ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՍԵՂՄԱԳԻՐ



ԵՐԵՎԱՆ
ՓԵՏՐՎԱՐ 2022



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ**

ՏԵՂԵԿԱԳԻՐ

**2020-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ
ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի հիմնարար՝ Սահմանադրության մակարդակում ամրագրված ուղղություններն են մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևելը, խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, ինչպես նաև իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը նպաստելը:

Այս գործառույթների համակցությունը թույլ է տալիս ինչպես վեր հանել համակարգային խնդիրներն անհատական մակարդակում խնդիրների քննարկման և մշտադիտարկման արդյունքներով, այնպես էլ կանխորոշել դրանց լուծման ուղիները՝ ունենալով անհրաժեշտ իրավական գործիքակազմ:

Նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքը բաղկացած է մի քանի հիմնական ուղղություններից: Մասնավորապես, Պաշտպանը մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին ներկայացնում է գրավոր կարծիք, ինչպես նաև նախաձեռնում է իրավական ակտում փոփոխություններ և լրացումներ:

Ավելին, Պաշտպանը նպաստում է նաև նորմատիվ իրավական ակտերի կարգավորումների համապատասխանության ապահովմանը ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխիքներին: Այս նպատակով Պաշտպանը իրավասու է դիմել Սահմանադրական դատարան օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:

Ավելին, Սահմանադրական դատարանի հետ ձևավորված սերտ համագործակցության շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը Սահմանադրական դատարանում քննվող մարդու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ գործերով հանդես է գալիս որպես դատարանի ընկեր (*amicus curiae*): Այս կարգավիճակում Պաշտպանը Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով Դատարանում քննվող գործերի վերաբերյալ ներկայացնում է հատուկ դիրքորոշումներ (*amicus brief*): Դիրքորոշումների հիմքում դրվում են ինչպես Պաշտպանին հասցեագրված անհատական բողոքների, այնպես էլ ներպետական ու միջազգային կարգավորումների վերլուծությունը:

Վերը նշված գործառույթների արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ սահմանադրական դատարանի միջև ինստիտուցիոնալ կապերը խթանելուն և զարգացնելուն է միտված Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարանում ներկայացուցչի ինստիտուտը:

Սրա հաշվառմամբ էլ՝ սույն տեղեկագիրն ամփոփում է Սահմանադրական դատարանում ներկայացուցչի և վերջինիս անմիջական ղեկավարությամբ աշխատող պատասխանատու ստորաբաժանման՝ Հետազոտական և կրթական կենտրոնի ներկայացուցիչների կատարած աշխատանքը՝ Սահմանադրական դատարան ներկայացված հատուկ դիրքորոշումների մասով:

Սույն տեղեկագրի նպատակն է հանրայնացնել Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարան ներկայացված հատուկ դիրքորոշումները, որպիսի պրակտիկան շարունակական բնույթ է կրում:

Նախորդ տարիներին հրապարակվել են «2017 – 2018 թվականներին ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ դիրքորոշումների սեղմագիր»¹ և «2018 – 2019 թվականներին ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ դիրքորոշումների սեղմագիր»² տեղեկագրերը:

Սույն տեղեկագրում ներկայացված են 2020 թվականի նոյեմբերից մինչև 2021 թվականի սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում Բարձր դատարանին հասցեագրված հատուկ դիրքորոշումները:

¹ Տե՛ս տեղեկագիրը հետևյալ հղումով <https://ombuds.am/am/site/ViewNews/674>:

² Տե՛ս տեղեկագիրը հետևյալ հղումով <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1008>:

2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի, դրա հետ համակարգային առումով փոխկապակցված «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝ դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 24-րդ, 25-րդ և 69-րդ հոդվածներով, 2020 թվականի մայիսի 14-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի, դրա հետ համակարգային առումով փոխկապակցված «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝ դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

Դիմումում Քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցը քննարկվել է այնքանով, որքանով դրանց՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը Դիմողին զրկում է իր գործի արդարացի և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից, քանի որ դատական կարգով Հաշտարարի որոշումը վիճարկելիս որևէ տարբերակում չի դրվում այն հանգամանքի միջև, թե արդյոք Դիմողը հրաժարվել է Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, թե ոչ:

Դիմողի դիրքորոշմամբ՝ վերոնշյալ նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը դիմումի քննության ժամանակ պարզում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը: Իսկ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար

պարտադիր դարձած որոշումը կողմերը կարող են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վիճարկել իրավասու դատարան ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով:

Վիճարկվող դրույթները Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարել դիտարկել Օրենքի 17-րդ հոդվածով սահմանված կարգավորումների հետ համակցությամբ: Մասնավորապես, նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավասու դատարանը չեղյալ է ճանաչում Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը, եթե՝

1) պահանջը ենթակա չէ քննության Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից.

2) Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացրել սույն օրենքով սահմանված ընթացակարգային կանոնների պահանջների խախտմամբ.

3) բացահայտվել են Ֆինանսական համակարգի հաշտարարի անաչառությունը բացառող հանգամանքներ:

Հատկանշական է, որ Սահմանադրական դատարանն իր 2012 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ ՍԴՈ-1051 որոշմամբ անդրադարձել է Օրենքի 17-րդ հոդվածի սահմանադրականության հարցին՝ արձանագրելով, որ այն դեպքում, երբ կազմակերպությունը Հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով, այսինքն՝ իր ազատ կամահայտնությամբ, հրաժարվում է Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, օրենքով սահմանված հիմքերով Հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը վիճարկելու սահմանափակ հնարավորություն նախատեսելն իրավաչափ է և սահմանադրականության խնդիր չի հարուցում: Իսկ այն դեպքում, երբ առկա չէ հիշյալ գրավոր համաձայնագիրը, Հաշտարարի որոշումներն իրավասու դատարան վիճարկելու հիմքերի սահմանափակումը՝ այնքանով, որքանով չի նախատեսում այդ որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ և հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով (նախկին խմբագրությամբ) սահմանված իրավունքների իրացման արգելափակմանը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում քննարկվող խնդրի ընդհանուր ուսումնասիրությունը և Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1051 որոշմամբ արձանագրված խնդրի շարունակականության մասին:

Մասնավորապես, ՍԴՈ-1051 որոշման կայացումից հետո տարիներ շարունակ կազմակերպությունները չեն կարողացել արդյունավետ կերպով իրականացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը, քանի որ օրենսդրական առկա կարգավորումները կազմակերպությունների՝ արդար դատաքննության իրավունքի պատշաճ իրացման երաշխիքներ չեն նախատեսել:

Առկա խնդրի մասին է վկայում նաև 2012 թվականին ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ Սահմանադրական դատարանի տարեկան հաղորդումը, որի համաձայն՝ ՍԴՌ-1051 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմամբ Սահմանադրական դատարանն ուղղորդել է օրենսդիր մարմնին «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքում գրավոր համաձայնագիրը չստորագրած ֆինանսական կազմակերպությունների համար սահմանելու համապատասխան իրավակարգավորում, որը թույլ կտար վերջիններիս Հաշտարարի որոշումները վիճարկելու **ըստ էության**³:

Հարկ է նկատել, որ Սահմանադրական դատարանը թիվ ՍԴՌ-1051 որոշմամբ Օրենքի 17-րդ հոդվածի, ինչպես նաև դրա հետ համակարգային առումով փոխկապակցված 18-րդ հոդվածի դրույթներով՝ կազմակերպության՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումները համարել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող միայն այն իրավակարգավորման շրջանակներում, երբ կազմակերպությունը Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից կամովին հրաժարվելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համաձայնագիր է կնքել վերջինիս գրասենյակի հետ:

Նշվածից հետևում է, որ բոլոր այն դեպքերում, երբ կազմակերպությունը Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համաձայնագիր չի կնքել, ապա նրա՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը:

Այսպիսով, հաշվի առնելով, որ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՌ-1051 որոշման ընդունումից հետո Օրենքում Սահմանադրական դատարանի այդ որոշմամբ արձանագրված խնդրի լուծմանն ուղղված փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել՝ կարող ենք արձանագրել, որ Սահմանադրական դատարանի որոշմամբ արձանագրված խնդիրը՝ կապված կազմակերպության կողմից Հաշտարարի որոշումներն ըստ էության վիճարկելու հնարավորության բացակայության հետ, շարունակում է արդիական և չլուծված մնալ:

Վերոգրյալից բացի Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն անդրադարձել է նաև օրենսդրական կարգավորումներում առկա մեկ այլ խնդրահարույց նորմի ևս: Այսպես, Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ծանուցելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդն անվերապահորեն և գրավոր ձևով համաձայնում է որոշման հետ, վերջինս կողմերի համար դառնում է պարտադիր: Հաճախորդի կողմից որոշման հետ համաձայնելու մասին գրությունն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ չհամաձայնելու դեպքում՝ 30 աշխատանքային օրը լրանալուց հետո Ֆինանսական համակարգի հաշտարարը պարտավոր է Կազմակերպությանը ծանուցել հաճախորդի

³ Հասանելի է http://www.concourt.am/armenian/report/statistic/cc_decision_stat2012.pdf հղումով, էջ 35:

գրավոր համաձայնության առկայության կամ բացակայության մասին և համապատասխանաբար՝ որոշումը կողմերի համար պարտադիր դառնալու կամ այդպիսին չդառնալու մասին:

Ստացվում է, որ կազմակերպությունը Հաշտարարի որոշումն ըստ էության բողոքարկելու հնարավորություն ունի, քանի դեռ հաճախորդն անվերապահորեն և գրավոր ձևով չի համաձայնել որոշման հետ: Խնդրահարույց են այն իրավիճակները, երբ հաճախորդն անվերապահորեն և գրավոր ձևով որոշման հետ համաձայնում է ծանուցվելու պահից սեղմ ժամկետում (օրինակ՝ 1-2 օրվա ընթացքում կամ հենց հաջորդ օրը): Դա գործնականում հնարավորություն չի տալիս կազմակերպությանը դատական կարգով Հաշտարարի որոշումն ըստ էության վիճարկելու: Այս պարագայում հարց է առաջ գալիս, թե որքանով է նշված կառուցակարգն արդյունավետ և գործնականում կիրառելի դատարանի մատչելիության իրավունքի ապահովման տեսանկյունից: Փաստացի, կազմակերպությունների՝ դատարանի մատչելիության իրավունքի արդյունավետ իրացումն ամբողջությամբ կախվածության մեջ է դրվում հաճախորդների գործողություններից, ինչն խնդրահարույց է: Պետությունը հանդես է գալիս որպես մարդու հիմնարար իրավունքների երաշխավորող, որի իրականացման եղանակներից մեկն էլ իրավական պաշտպանությունն է դատարանների միջոցով:

Մարդու իրավունքների պաշտպանը բարձրացված խնդիրը դիտարկել է արդար դատաքննության և դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքների պատշաճ երաշխավորման համատեքստում: Ընդ որում, Սահմանադրական դատարանում վիճարկվող օրենսդրական կարգավորումներն ուսումնասիրվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների ու միջազգային փորձի հիման վրա:

Մասնավորապես, Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի օրենքի գերակայության լույսի ներքո, որով պահանջվում է, որ դատավարության մասնակիցներն ունենան դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որոնք նրանց թույլ կտան պաշտպանել իրենց քաղաքացիական իրավունքները⁴:

Արդար դատաքննության բաղկացուցիչ մասն է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, որին բազմիցս անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նշելով, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է բոլոր անձանց քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին վերաբերող յուրաքանչյուր հայց դատարանին ներկայացնելու իրավունքը: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր

⁴ Տե՛ս՝ Բելեշը և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության 2003 թվականի փետրվարի 12-ի վճիռը, գանգատ թիվ 47273/99, կետ 49

«քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների» հետ կապված ցանկացած պահանջ դատարանում կամ տրիբունալում ներկայացնելու իրավունք⁵: Այդ դրույթը մարմնավորում է «դատարանի իրավունքը», այսինքն՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը քննություն սկսելու իրավունքի միայն մի մասն է, ինչի սահմանափակումը դատարանների կողմից ընթացակարգային օրենքների զուտ խիստ մեկնաբանման հետևանքով կառաջացնի իրավունքի խախտում, և անձի այդ իրավունքը կկրի վերացական բնույթ, հետևաբար՝ քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում⁶:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի «Քաղաքացիական և առևտրային գործերով բողոքարկման ընթացակարգերի և համակարգերի գործողության մեջ դնելու և գործունեության բարելավման վերաբերյալ» թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի «ա» մասի համաձայն՝ սկզբունքորեն պետք է գոյություն ունենա ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) կայացրած ցանկացած որոշման նկատմամբ վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից վերահսկողություն իրականացնելու հնարավորություն⁷:

Հաշվի առնելով, որ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ստորադաս դատական ատյանի որոշումների նման կողմերի համար պարտադիր կատարման ենթակա պարտականություններ է առաջացնում՝ հետևաբար Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշմամբ դրանք ևս վերադաս ատյանում բողոքարկելու հնարավորություն պետք է լինի:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ Օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը հակասում են ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին այնքանով, որքանով կազմակերպությունների՝ Հաշտարարի որոշումները դատական կարգով բողոքարկելը կախվածության է մեջ դրվում հաճախորդների գործողություններից:

Սահմանադրական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-1571 որոշմամբ⁸ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասը

⁵ Տե՛ս՝ Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության 1975 թվականի փետրվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 4451/70, կետ 36:

⁶ Տե՛ս Կրեուզն ընդդեմ Լեհաստանի (Kreuz v. Poland) գործով 2001 թվականի հունիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 28249/95, կետ 52:

⁷ Հասանելի է

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680505f3c> հղումով:

⁸ Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1571.pdf> հղումով:

ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ նշված դրույթը չի սահմանափակում Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ գրավոր համաձայնագիր չկնքած Կազմակերպության՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը դատական կարգով ըստ էության վիճարկելու իրավունքը: Նույն որոշմամբ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասի, 458-րդ հոդվածի 1-ին մասի և 459-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

ՀՀ վճռաբեկ դատարանը 2020 թվականի հունիսի 1-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասի, 458-րդ հոդվածի 1-ին մասի և 459-րդ հոդվածի՝ Սահմանադրության 27-րդ, 29-րդ, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 67-րդ և 78-րդ հոդվածների համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

Դիմողի պնդմամբ՝ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական դատավարությունում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի շրջանակներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու հիմքում դրվում է փորձագիտական եզրակացությունն այն մասին, որ «(...) իրեն մեղսագրվող արարքը կատարելու ժամանակ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձը չէր կարող հասկանալ իր գործողությունների փաստացի բնույթը և հասարակական վտանգավորությունը և ղեկավարել դրանք: Ուստի նրան հարկ է ճանաչել անմեղսունակ (...): Այսինքն, փորձագիտական եզրակացությունում փորձագետը քննիչի կողմից իրեն առաջադրված՝ անձի՝ անմեղսունակության վիճակում ենթադրյալ հանցանքի կատարման վերաբերյալ հարցերին պատասխանելիս եզրահանգումներ է կատարում անձի՝ անմեղսունակության վիճակում քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին:

Դիմողի գնահատմամբ՝ վիճարկվող օրենսդրական կարգավորման և ձևավորված պրակտիկայի պայմաններում ստացվում է, որ անմեղսունակության վերաբերյալ փորձագիտական եզրահանգումները դրվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին քրեադատավարական ընթացակարգով անգործունակ ճանաչելու և առանց նրա

մասնակցության քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարումը կազմակերպելու հիմքում: Մինչդեռ, անգործունակությունը քրեական դատավարությունում դատարանի կողմից չի կարող ճանաչվել՝ հիմքում դնելով անձի անմեղսունակության վերաբերյալ փորձագիտական եզրակացության հետևությունները: Մասնավորապես, անմեղսունակությունն անձին անգործունակ ճանաչելու պայման չէ:

Դիմողի դիրքորոշմամբ՝ հասարակության համար բարձր և նվազ վտանգ ներկայացնող անձանց նկատմամբ միևնույն՝ ազատությունից զրկելու դատավարական հարկադրանքի միջոցի կիրառումն արդարացված չէ՝ առնվազն համաչափության սկզբունքից ելնելով: Ուստի, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված անվտանգության միջոցի կիրառումը պետք է ունենա այլընտրանք:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Սահմանադրական դատարանում քննվող դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող քրեադատավարական կարգավորումների խնդրահարույց բնույթը բխում է մեր օրենսդրությամբ դեռևս չլուծված համակարգային այնպիսի խնդիրներից, ինչպիսիք են՝ «անգործունակության» ինստիտուտի բևեռացված կարգավորումները և քրեական վարույթում անվտանգության միջոցների ու բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կարգավորվածության անկատարությունը:

Կարևոր ենք համարում ընդգծել, որ առհասարակ անգործունակ անձանց իրավունքների, այդ թվում՝ իրենց առնչվող հարցերում որոշումների կայացմանը, որպես պացիենտ իրազեկված համաձայնություն տալու հետ կապված հարցերը Մարդու իրավունքների պաշտպանի պարբերական մշտադիտարկման առարկա են⁹:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթների դիտարկումն անձի անձնական ազատության սահմանադրական իրավունքի համատեքստում իրականացվել է ինչպես ՀՀ ներպետական օրենսդրության, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության ուսումնասիրության արդյունքներով: Ընդ որում, դիմումով

⁹ Տե՛ս, մասնավորապես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմի 2019 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը,

<https://ombuds.am/images/files/aaecbd07ea51e62da1b42ceed9470f81.pdf>

«Հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը

<https://ombuds.am/images/files/1a342c6fb902f57c52e8495d183e3095.pdf>

«Երեխաների և անգործունակ չափահասների՝ որպես պացիենտների ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության անձնական ազատության և այլ իրավունքների վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը

<https://ombuds.am/images/files/f5dcd3eb211993d573b3aab9bc85ffd9.pdf>

բարձրացված իրավական խնդիրներին անդրադարձ է կատարվել հետևյալ դիտանկյուններից՝

1. անգործունակության ինստիտուտի էությունը՝ որպես իրավունքների իրացմանը և որոշումների կայացմանն աջակցող մեխանիզմ. ներպետական օրենսդրական կանոնակարգումների անհամապատասխանությունը միջազգային իրավական մոտեցումներին,

2. բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների և անվտանգության միջոցի կիրառումը քրեական դատավարությունում. առավելագույն ժամկետների և պարբերական դատական վերանայման բացակայության խնդիրները:

Սահմանադրական դատարանը 2015 թվականի ապրիլի 7-ի ՍԴՈ-1197 որոշմամբ անդրադարձել է «գործունակություն» և «անգործունակություն» ինստիտուտներից բացի այլ՝ գործունակության մասնակի սահմանափակման արդյունավետ կառուցակարգի բացակայության խնդրին՝ նշելով, որ օրենսդրական փոփոխությունների միջոցով պետք է բացառել անձանց գործունակության նկատմամբ անհամաչափ միջամտությունները՝ առավել ամբողջական դարձնելով անձին «անգործունակ» և «սահմանափակ գործունակ» ճանաչելու հիմքերը:

Սա, իր հերթին, պայմանավորված է «գործունակություն» և «անգործունակություն» իրավական կատեգորիաների բևեռացված կարգավորումներով, անձի հասկացողությանն ու որոշումներ կայացնելու ունակությանը համապատասխան գործունակության աստիճանը որոշելու ճկուն կառուցակարգերի բացակայությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքներն են վկայում, որ անգործունակ ճանաչված անձանց իրավունքների ապահովման հարցում օրենսդրական և գործնական խնդիրները բխում են անգործունակության ինստիտուտի անկատար կարգավորվածության համակարգային խնդրից: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է գործնականում շարունակաբար արձանագրվող խնդիրներին՝ խնամակալի ընտրության հարցում անձի կարծիքը չլսելուն, խնամակալի կողմից անգործունակ ճանաչված անձին անտեսելուն, դրա արդյունքում հոգեբուժական հիվանդանոցից դուրսգրման օրենսդրական հնարավորություն բացակայությանը, անգործունակ անձի գույքային իրավունքներից չօգտվելուն, խնամակալների և խնամարկյալների միջև շահերի բախմանը և ի շահ խնամարկյալի չգործելուն:

Ներկայում միջազգայնորեն ընդունելի մոտեցում է ձևավորված, համաձայն որի՝ խնամակալության ինստիտուտում փոփոխություններ են անհրաժեշտ՝ անձի փոխարեն խնամակալի կողմից նրան վերաբերող որոշումների կայացման մոդելից անցում կատարելով որոշումների կայացման աջակցման մոդելին: Այն իրենից ներկայացնում է գործընթաց, որի ընթացքում անձին ցուցաբերվում է այնքան աջակցություն, որքան անհրաժեշտ է, որպեսզի վերջինս կարողանա ինքնուրույն որոշում կայացնել և արտահայտել իր կամքն ու

նախասիրությունները¹⁰: **Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձն է իր վերաբերյալ որոշումների կայացնողը, իսկ աջակցողն անհրաժեշտության դեպքում պարզաբանում է խնդիրները, մեկնաբանում է անձի նախասիրությունները:** Նույնիսկ այն դեպքերում, երբ հաշմանդամություն ունեցող անձը պահանջում է լիակատար աջակցություն, աջակցողը պետք է հնարավորություն ընձեռի, որպեսզի այդ անձն առավելապես գործադրի իր գործունակությունը՝ վերջինիս ցանկության և լավագույն շահի համաձայն¹¹:

Որոշումների կայացման աջակցության մոդելը նպաստում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի ինքնավարության կայունացմանը և հասարակական հարաբերություններին ինքնուրույն մասնակցելուն, ինչը չափազանց կարևոր է անձի հոգեկան առողջության, ինչպես նաև իրավունքների ապահովման տեսանկյունից:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Անգործունակ չափահասների իրավական պաշտպանությանն առնչվող սկզբունքների մասին» 1999 թվականի փետրվարի 23-ի թիվ R(99)4 հանձնարարականում սահմանված են անգործունակ չափահաս անձանց իրավական պաշտպանության սկզբունքները, և նշված հանձնարարականով պետություններին առաջարկվում է համապատասխան օրենսդրական կարգավորումներ ամրագրելիս առաջնորդվել նշված սկզբունքներով¹²: Դրանք են, մասնավորապես,

- իրավական կարգավորումների ճկունությունը, որը թույլ է տալիս կիրառել իրավական կարգավորումների այնպիսի գործիքներ, որոնք լիարժեք հաշվի կառնեն, ի թիվս այլնի, տարբեր իրավիճակներում անգործունակության կոնկրետ աստիճանը (2-րդ սկզբունքի 1-ին կետ):

- Օրենսդրությունը հնարավորության սահմաններում պետք է ամրագրի, որ **գործունակության տարբեր աստիճաններ կարող են առկա լինել, և անգործունակությունը ևս ժամանակ առ ժամանակ կարող է տարբերվել:** Հետևաբար, պաշտպանական միջոցը չպետք է ինքնաբերաբար հանգեցնի գործունակության լրիվ վերացման: Այդուհանդերձ, **գործունակության սահմանափակումը հնարավոր է, եթե դա անհրաժեշտ է անձի պաշտպանության համար:**

- Պաշտպանական միջոցները չպետք է ինքնաբերաբար անձին զրկեն իր առողջությանը միջամտելու համաձայնություն տալու կամ չտալու իրավունքից կամ

¹⁰ Տե՛ս «Որոշումների կայացման աջակցում, լավագույն փորձի ուղեցույցը» https://www.mwscot.org.uk/sites/default/files/2019-06/mwc_sdm_draft_gp_guide_10_post_board_jw_final.pdf, էջ 4:

¹¹ Տե՛ս «Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց գործունակություն» թեմայով Հիմնարար իրավունքների եվրոպական միության գործակալության ուսումնասիրությունը <https://fra.europa.eu/sites/default/files/legal-capacity-intellectual-disabilities-mental-health-problems.pdf>, էջ 11:

¹² Հասանելի է [https://www.coe.int/t/dg3/healthbioethic/texts_and_documents/Rec\(99\)4E.pdf](https://www.coe.int/t/dg3/healthbioethic/texts_and_documents/Rec(99)4E.pdf) հղումով:

ցանկացած ժամանակ այլ անձնական բնույթի որոշումներ կայացնելու հնարավորությունից, եթե նա ունակ է նման որոշումներ կայացնել (3-րդ սկզբունք):

- Չափահաս անգործունակ անձի նկատմամբ պաշտպանության միջոց կարող է սահմանվել **միայն նրա լիարժեք և կամավոր համաձայնությամբ** (5-րդ սկզբունքի 1-ին կետ):

- Այն դեպքերում, երբ պաշտպանության միջոցի սահմանումն անհրաժեշտ է, **այն պետք է համարժեք լինի անձի անգործունակության աստիճանին և հարմարեցված լինի անձի անհատական հանգամանքներին և կարիքներին (6-րդ սկզբունքի 1-ին կետ):**

- Անգործունակ չափահաս անձի նկատմամբ պաշտպանության միջոց սահմանելիս և կիրառելիս **պետք է հնարավորինս պարզել անձի նախկին և ներկա ցանկություններն ու զգացողությունները, որոնք պետք է հաշվի առնվեն և հարգանքի արժանանան:**

Մասնավորապես, այս սկզբունքը ենթադրում է նաև, որ չափահասի նկատմամբ ներկայացուցիչ կամ օժանդակություն տրամադրող ընտրելիս անձի ցանկությունները պետք է հնարավորինս հաշվի առնվեն և հարգանքի արժանանան: Դա ենթադրում է նաև, որ անգործունակ չափահաս անձի ներկայացուցիչը կամ օժանդակություն տրամադրողը հնարավորության դեպքում անձին պետք է տրամադրի անհրաժեշտ տեղեկատվություն հատկապես նրա վերաբերյալ կայացվող հիմնական որոշումների վերաբերյալ, որպեսզի անձը ներկայացնի իր տեսակետը (9-րդ սկզբունք):

- Անգործունակ անձի իրավունքների անձամբ իրականացման ապահովման հարցում վերոնշյալ սկզբունքներից զատ նախանշված են նաև վերջինիս իրավունքներն ինքնուրույն իրացնելուն ուղղված այլ երաշխիքներ: Մասնավորապես, հանձնարարականն ամրագրում է, որ պետք է նախատեսվի, որ օրենքի հիման վրա անգործունակ չափահաս անձի անունից գործող կամ որոշումներ կայացնող և դատական կամ վարչական մարմին չհանդիսացող սուբյեկտներին շնորհված լիազորությունները **սահմանափակ լինեն և նրանց գործողությունները վերահսկվեն: Նշված լիազորությունները շնորհելը չպետք է չափահաս անձին զրկի գործունակությունից: Այդպիսի յուրաքանչյուր լիազորություն պետք է հնարավոր լինի ցանկացած ժամանակ փոփոխել կամ սահմանափակել դատական կամ վարչական մարմնի կողմից՝ պաշտպանական միջոցներ կիրառելու նպատակով** (18-րդ սկզբունքի 1-3-րդ կետեր):

Մինչդեռ, գործող օրենսդրությամբ անգործունակության իրավական կարգավորումներով որևէ կառուցակարգ սահմանված չէ, որը հնարավորություն կտար ցուցաբերել անհատական մոտեցում՝ անձի ֆիզիկական և հոգեկան առողջության վիճակով պայմանավորված՝ իրավունքների անձամբ իրականացման ապահովման հարցում:

«Քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ անձի գործունակություն է համարվում *իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք*

կախարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն): Օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը (քաղաքացիական իրավունակություն) բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես: Քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ:

Անձի գործունակության սահմանափակումը (զրկումը) ենթադրում է վերջինիս քաղաքացիաիրավական ակտիվության շրջանակների նեղացում, իսկ օրինական ներկայացուցչի ինստիտուտը կոչված է ի շահ անձի լրացնելու այդ «սահմանափակումը»: Մինչդեռ, անձի նման իրավական կարգավիճակը որևէ կերպ չի կարող ազդել վերջինիս՝ միջազգայնորեն երաշխավորված իրավունքների շրջանակի վրա: **Գործունակության սահմանափակումը չի կարող իրավական արգելք լինել անձի՝ իրեն վերաբերող գործընթացներին մասնակից դառնալու և իր կարծիքն արտահայտելու համար:**

Մինչդեռ, ստացվում է, որ քրեական դատավարությունում անձի անգործունակության հարցի լուծմամբ վերջինիս իրավունքների սահմանափակման ծավալն ու դրանից բխող իրավական հետևանքները տարածվում են ոչ միայն քրեական վարույթում վերջինիս լիարժեք մասնակցության վրա, այլև առհասարակ անձի քաղաքացիաիրավական ակտիվությունն են սահմանափակում քրեական վարույթի շրջանակներից դուրս: Ավելին, անձին անգործունակ ճանաչելն առաջ է բերում քրեադատավարական այլ հետևանքներ քրեական վարույթին անձի լիիրավ մասնակցության բացառման առումով:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների երաշխավորման միջազգային իրավական մոտեցումները հիմնված են այն գաղափարի վրա, որ կառավարությունները չունեն իրավասություն տրամադրելու կամ մերժելու մարդու իրավունքներն ու ազատությունները: **Մարդիկ ունեն իրավունքներ զուտ այդպիսին լինելու ուժով: Հետևաբար, հոգեկան հաշմանդամություն ունեցող անձինք չպետք է հիմնավորեն, որ իրենք ունեն որոշակի իրավունքներ և կարող են իրացնել դրանք սոցիալապես ընդունելի եղանակներով: Մարդու իրավունքների հիմնարար բնույթն ինքնին հիմք է ստեղծում հոգեկան հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ անարդարացի վերաբերմունքին հակազդելու համար**¹³:

Ասվածի հաշվառմամբ՝ կարծում ենք, որ *օրենսգրքի վիճարկվող 451-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված՝ անձին անգործունակ ճանաչելու քրեադատավարական հիմքի*

¹³ Տե՛ս Լ. Գոստին և Լ. Գաբլ, «Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ. մարդու իրավունքների սկզբունքների կիրառության համաշխարհային հեռանկարը մտավոր հաշմանդամության դեպքում», 2004 թ.: Հասանելի է <https://scholarship.law.georgetown.edu/cgi/viewcontent.cgi?article=1088&context=facpub&fbclid=IwAR394Dbw45MLR1ArHb6EpBzBa-LvDcDpNG1d0ulecw9b7WmtkuZUcMyrFD4> հղումով:

սահմանադրականությունը պետք է դիտարկման առարկա դառնա առհասարակ «անգործունակության» ինստիտուտի իրավական բովանդակության, այդ ինստիտուտի անկատարության արդյունքում իբրև հետևանք անձի իրավունքների անհամաչափ սահմանափակումների համատեքստում:

Անդրադառնալով հարկադիր բուժման առավելագույն ժամկետների և պարբերական դատական վերանայման կառուցակարգերի սահմանման խնդրին՝ Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում նշել, որ ներպետական մակարդակում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասն արգելում է անմեղսունակության վիճակում հանցանք կատարած անձանց նկատմամբ կիրառել խափանման միջոցներ: Այն դեպքերում, երբ անձն ունի հոգեբուժական օգնության կարիք և վտանգավոր է իր կամ հասարակության համար, վերջինիս նկատմամբ մինչև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումը կարող են կիրառվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անվտանգության միջոցները՝ հսկողության համար հիվանդին ազգականներին, հոգաբարձուներին, խնամակալներին հանձնելը կամ հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը:

ՀՀ քրեական դատավարության 463-րդ հոդվածը սահմանում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշում կայացնելիս դատարանի կողմից քննարկվող հարցերի շրջանակը, իսկ 464-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *եթե անձը հասարակության համար մեծ վրանգ չի ներկայացնում և կարիք չունի իր նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման, դատարանը կայացնում է գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում: Եթե արարքը կատարելու պահին անձը գտնվել է անմեղսունակության վիճակում, իսկ դատական քննության պահին առողջացել է, դատարանը նույնպես որոշում է կայացնում գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:*

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը տարբերակում է անմեղսունակության վիճակում հանցանք կատարած անձանց նկատմամբ ներգործության երկու առանձին ռեժիմ՝ անվտանգության միջոց և բժշկական բնույթի հարկադրանքի միջոց, որոնց կիրառման հիմքերն ու նպատակները, որոնք ըստ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի քրեադատավարական կարգավորումների տրամաբանության, չեն նույնանում:

Մինչդեռ, Քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի ժամկետներ: Արդյունքում, անձը մինչև դատարանի կողմից բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու կամ այն փոփոխելու մասին որոշում կայացնելը կարող է տևական ժամանակ պահվել հոգեբուժական կազմակերպությունում՝ անվտանգության միջոց կիրառելու հիմքով: Այդ ժամանակահատվածում անձը կարող է ապաքինվել և ինքն իր կամ հասարակության համար

այլևս վտանգ չներկայացնել, սակայն շարունակել պահվել հոգեբուժական կազմակերպությունում՝ ստանալով պահպանողական բուժում (առանց դատական վերահսկողության):

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմի մշտադիտարկմամբ արձանագրվել է դեպք, երբ **հոգեբուժական կազմակերպության միջնորդությունների քննարկման դատական նիստերի բազմաթիվ հետաձգումների արդյունքում անձը մոտ մեկ տարի պահվել է հոգեբուժական կազմակերպությունում, որտեղ առանց համապատասխան հիմքի ստացել է հարկադիր բուժում, և նրա անձնական ազատությունը սահմանափակված է եղել:** Այս պարագայում դատարանի կողմից կիրառված հարկադրական միջոցի առավել խիստ տեսակով փոփոխման հարցի քննարկումը եղել է ժամանակավրեպ, քանի որ անձի առողջական վիճակը բարելավվել է:

Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի, հոգեբուժական կազմակերպությունում տեղավորելու և պահելու ձևով անվտանգության միջոցների կիրառման առավելագույն ժամկետների բացակայության պայմաններում առավել կարևորվում է պարբերական դատական վերանայման երաշխիքի առկայությունը: Մինչդեռ, քրեադատավարական օրենքում նշված անվտանգության միջոցի կիրառման իրավաչափության դատական պարբերական վերանայման պահանջ առկա չէ:

Օրենսդրական կարգավորման նման թերություններն էլ հենց հանգեցնում են այս անվտանգության միջոցի հիման վրա անձանց երկար ժամանակ հոգեբուժական կազմակերպությունում պահելուն՝ առանց դատարանի կողմից բուժման նկատմամբ համապատասխան վերահսկողության:

Խնդիրը շարունակվում է դատարանի կողմից բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու դատական ակտի առկայության պայմաններում: Քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում նշված ակտի ի պաշտոնե (ex officio) դատական վերանայման մեխանիզմներ:

Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ ձևավորված պրակտիկայի համաձայն՝ հարկադրանքի միջոցի վերանայման հարցը բարձրացվում է միայն հոգեբուժական կազմակերպության տնօրենի կողմից՝ այն վերացնելու կամ փոխարինելու վերաբերյալ դատարան միջնորդություն ներկայացնելու դեպքերում: Հոգեբուժական կազմակերպությունը նման միջնորդություն ներկայացնում է միայն այն դեպքում, երբ նույն կազմակերպության բժիշկներից բաղկացած բժշկական բնույթի հարկադրական միջոցների վերանայման հանձնաժողովը, վեց ամիսը մեկ անգամ, ուսումնասիրելով անձի առողջական վիճակը, տալիս է եզրակացություն, որ նա կա՛մ այլևս չունի հարկադիր բուժման կարիք, կա՛մ դա հնարավոր է իրականացնել այլ՝ ընդհանուր կամ արտահիվանդանոցային պայմաններում: Արդյունքում, գործնականում արձանագրվել են դեպքեր, երբ անձը

շարունակաբար պահվում է հոգեբուժական կազմակերպությունում՝ առանց հարկադիր բուժման վերաբերյալ ակտի դատական վերանայման¹⁴:

Ընդ որում, հարկ է ուշադրություն դարձնել, որ ի տարբերություն քրեադատավարական կարգավորումների՝ քաղաքացիական դատավարության կարգով հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարական բուժման դեպքում ժամկետների և դատական վերանայման հարցերն ամրագրում ստացել են: Մասնավորապես, 2020 թվականի հոկտեմբերի 6-ին ուժի մեջ մտած «Հոգեբուժական օգնության մասին» նոր օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է հետևյալը. «*Ոչ հոժարական բուժումը կարող է տևել ոչ ավելի, քան վեց ամիս: Եթե վեց ամիսը լրանալու դեպքում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մոտ չեն վերացել ոչ հոժարական բուժման՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերը, ապա վեցամսյա ժամկետը լրանալուց հետո՝ 72 ժամվա ընթացքում, հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը դիմում է ներկայացնում դատարան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարական բուժման ենթարկելու պահանջով: Սույն մասով նախատեսված դեպքերում մինչև դատարանի կողմից ոչ հոժարական կարգով հոսպիտալացնելու վերաբերյալ բուժման ենթարկելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելը հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին առանց նրա իրազեկված համաձայնության տրամադրվում են միայն շտապ և անհետաձգելի հոգեբուժական օգնություն և սպասարկում:*»:

Ստացվում է, որ քաղաքացիադատավարական կարգով անձի հարկադիր բուժման առավելագույն ժամկետներ և ըստ այդմ, պարբերական դատական վերանայման կառուցակարգեր ամրագրվել են, իսկ քրեական վարույթի շրջանակներում անձի անձնական ազատության իրավունքին նույնաբնույթ միջամտության դեպքում՝ ոչ: Օրենսդրական այս խնդիրներն առաջ են բերում անձի իրավունքների անհամաչափ և շարունակական սահմանափակումներ:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 4-ի թիվ ՍԴԱՌ-89 որոշմամբ նշված գործի վարույթը կարճվել է¹⁵:

¹⁴ Տե՛ս առավել մանրամասն «Հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը, էջեր 49-54: Հասանելի է <https://ombuds.am/images/files/1a342c6fb902f57c52e8495d183e3095.pdf> հղումով:

¹⁵ Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/working/2021/pdf/sdav-89.pdf> հղումով:

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 24-րդ, 25-րդ և 69-րդ հոդվածներով, 2021 թվականի հունվարի 25-ին դիմել է Սահմանադրական դատարան ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 57-րդ և 78-82-րդ հոդվածների համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

Դիմումում Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի սահմանադրականության հարցը բարձրացվել է այնքանով, որքանով առկա օրենսդրական բացը չի ապահովում Սահմանադրությամբ ամրագրված իրավական որոշակիության սկզբունքի պահանջները, քանի որ Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ հաստիքների կրճատումների դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունք չի տրվում առավել բարձր պաշտոն զբաղեցնող և (կամ) առավել երկար աշխատանքային ստաժ ունեցող աշխատողին:

Այլ կերպ ասած՝ հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության օրենսդրական չափանիշներ սահմանված չեն ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) *հաստիքների կրճատման* դեպքում:

Օրենսգրքի ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության

օրենսդրական չափանիշներ ամրագրված չեն Օրենսգրքով: Տվյալ դեպքում անհրաժեշտություն է առաջացել հարցը դիտարկելու աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքի ապահովման տեսանկյունից:

Սահմանադրական դատարանի 2010 թվականի հուլիսի 7-ի թիվ ՍԴՈ-902 որոշման համաձայն՝ աշխատանքի ընտրության ազատությունը՝ որպես սոցիալական ազատություն, ի թիվս այլնի, ներառում է աշխատանք փնտրելու իրավունքը, որի մեկնաբանությունից բխում է նաև **արդեն ձեռք բերած աշխատանքից կամայականորեն չզրկվելու իրավունքը**:

Այս պարագայում խնդիր է առաջանում գնահատել, թե բավարար և իրավաչափ է արդյոք Օրենսգրքում հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության չափանիշների բացակայությունն աշխատողի իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել, որոնցով բարձրացվել է քննարկվող խնդիրը: Մասնավորապես, քաղաքացիները տեղեկացրել են, որ հաստիքների կրճատման հիմքով իրենց աշխատանքից ազատելիս գործատուները ոչ արդար մոտեցում են ցուցաբերում: Ստացված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ բարձրացված մտահոգություններն արդարացված են այն առումով, որ հաստիքի կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշելիս գործատուն առաջնորդվում է սեփական հայեցողությամբ, ինչի հետևանքով լինում են դեպքեր, երբ աշխատանքից ազատվում է առավել երկար աշխատանքային ստաժ, առավել բարձր դասային աստիճան կամ կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող աշխատողը՝ տեղը զիջելով այդ չափանիշներին նվազ բավարարող աշխատողին:

Ստացված բողոքների համալիր ուսումնասիրությունը բերում է այն համոզմանը, որ հաստիքների կրճատումը շատ հաճախ «անցանկալի» աշխատողներից ազատվելու միջոց է գործատուների համար, ինչն ինքնին ոչ իրավաչափ և անթույլատրելի երևույթ է: Այդպիսով, Պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր դիտարկումը թույլ է տալիս արձանագրելու միտում, որ գործատուները բարեխղճորեն չեն իրացնում հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունն այս կամ այն աշխատողին տալու իրենց հայեցողությունը:

Խնդրին անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում¹⁶:

¹⁶ Տե՛ս՝ 2018 թվականի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումը, <http://old.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/0e3f463c0e6c42f12cb497d483739dec.pdf> էջ 126, 2019 թվականի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումը, <http://ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf>, էջեր 153-154:

Գործնականում առաջ եկած խնդիրների լուծումը, Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ պետք է տրվի հաստիքների կրճատման հիմքով աշխատողներին աշխատանքից ազատելու դեպքում կրճատվող հաստիքը զբաղեցնող աշխատողների միջև ընտրության որոշակի չափանիշների սահմանմամբ, որը պետք է իրականացվի աշխատողի գործնական հատկանիշների, մասնագիտական պատրաստվածության և որակավորման չափանիշների հաշվառմամբ: Դա մի կողմից՝ լրացուցիչ երաշխիք կլինի առավել երկար աշխատանքային ստաժ, առավել բարձր դասային աստիճան կամ կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող¹⁷ աշխատողների համար, մյուս կողմից էլ՝ նշված չափանիշներին չբավարարող աշխատակիցներին աշխատանքից ազատելիս նրանց նախապատվություն չտալն արդարացված հիմք կունենա:

Աշխատանքի միջազգային կազմակերպության 1982 թվականի հունիսի 2-ի «Աշխատանքային հարաբերությունների դադարեցման մասին¹⁸» թիվ 158 կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունը չեն կարող դադարեցվել, քանի դեռ չկա այնպիսի բավարար պատճառ, որը կապված է աշխատողի կարողության կամ վարքագծի հետ, կամ որը հիմնված է ձեռնարկության, հիմնարկի կամ ծառայության գործառնական պահանջների վրա¹⁹: Աշխատանքի միջազգային կազմակերպության 1982 թվականի հունիսի 2-ի «Աշխատանքային հարաբերությունների դադարեցման մասին» թիվ 166 հանձնարարականի 23-րդ կետի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կառուցվածքային կամ համանման բնույթի պատճառներով **աշխատանքից ազատելիս աշխատողների միջև ընտրությունը պետք է կատարվի նախապես սահմանված չափանիշների հիման վրա**, որոնք հավասարակշռում են միաժամանակ գործատուի և աշխատողի շահերը²⁰:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դիտարկմամբ՝ Օրենսգրքում հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության չափանիշների բացակայության հետևանքով գործնականում առաջացած իրավիճակները պայմանավորված են իրավակարգավորման համակարգային մոտեցման թերացումներով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի զարգացրած իրավաբանության համաձայն՝ **հայեցողություն նախատեսող օրենքն ինքնին համապատասխանում է**

¹⁷ Ընտրված չափանիշների շրջանակը պայմանական է, այն կարող է ընգրկել այլ չափանիշներ ևս:

¹⁸ Սույն Կոնվենցիան վերաբերում է միայն գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու դեպքերին՝ ըստ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի:

¹⁹ Հասանելի է https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:C158 հղումով:

²⁰ Հասանելի է https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:R166 հղումով:

կանխատեսելիության պահանջին՝ պայմանով, որ հայեցողության շրջանակը և դրա իրացման եղանակը սահմանվեն բավարար հստակությամբ՝ հաշվի առնելով քննարկվող միջոցի օրինական նպատակը՝ այդպիսով անձին տալով անհատական պաշտպանություն կամայական միջամտությունից²¹:

Այսպիսով, միջազգային փաստաթղթերում, Սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Սահմանադրական դատարանում քննարկման առարկա դարձած խնդիրը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունն այս կամ այն աշխատողին տալու գործարարի հայեցողության շրջանակը և դրա իրացման եղանակներն առհասարակ սահմանված չեն Օրենսգրքով: Մինչդեռ, անհրաժեշտ է բացառել գործարարի սուբյեկտիվ հայեցողականությունը:

Առկա օրենսդրական բացն աշխատողների համար կանխատեսելի չի դարձնում իրավահարաբերության մասնակցի, տվյալ դեպքում՝ գործարարի գործողությունները: Նման պայմաններում աշխատողները չեն կարող վստահ լինել իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության և ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում, ինչպես սահմանված է Սահմանադրական դատարանի, օրինակ՝ թիվ ՍԴՈ-1289 որոշմամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ կարծում ենք, որ Օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 57-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին այնքանով, որքանով իրավական ակտով չեն սահմանվել հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության օրենսդրական չափանիշներ:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի ապրիլի 20-ի թիվ ՍԴԱՈ-80 որոշմամբ նշված գործի վարույթը կարճվել է²²:

²¹ St' u Olssonն ընդդեմ Շվեդիայի (Olsson v. Sweden (No. 1)) գործով 1988 թվականի մարտի 24-ի վճիռը, գանգատ թիվ 10465/83, կետ 61: Գիլլոուն ընդդեմ Միացյալ Թագավորության (Gillow v. United Kingdom) գործով 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 9063/80, կետ 51:

²² Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/working/2021/pdf/sdav-80.pdf> հղումով:

2. ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և ««Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

«Հ նախագահը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասի» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և 73-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 2021 թվականի փետրվարի 24-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և ««Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի՝ Սահմանադրության 4-րդ հոդվածին, 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 163-րդ հոդվածի 2-րդ մասին և 173-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

Սահմանադրական դատարանում վիճարկվող օրենքի 1-ին հոդվածով նախատեսվում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում դատարանների թույլտվությամբ անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունները քննում են միայն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորները:

Նույն հոդվածով սահմանվել է նաև, որ համապատասխան մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, բացառությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների, քննում են միայն տվյալ մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորները: Այսինքն, Օրենքով նախատեսվել է մինչդատական քրեական վարույթի գործերի և ՀՀ տարածքում դատարանների թույլտվությամբ անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննությունը քրեական մասնագիտացման առանձին դատավորների կողմից:

Օրենքով սահմանվել է, որ դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով թեկնածուների որակավորման

ստուգումը, ուսուցումը և դատավորների թեկնածուների ցուցակի հաստատումն իրականացվելու է դատավորների թվակազմն ավելացնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, իսկ գործող դատավորների թեկնածուների հավակնորդների ուսուցումը և փորձաշրջան իրականացվելու է մեկամսյա ժամկետում: Դատավորների նոր հաստիքների համալրման համար Օրենքով նախատեսվել են պարզեցված պայմաններ: Օրինակ, սահմանվել է, որ դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների ենթաբաժնի համալրման նպատակով որակավորման գրավոր քննության առաջադրանքները կազմվում են թեստային առաջադրանքների՝ հակիրճ իրավական հիպոթետիկ խնդիրների միջոցով՝ դրանց ճիշտ լուծումները հավակնորդի կողմից ընտրելու պահանջով: Այսինքն, թեստային առաջադրանքները որպես այլընտրանք են նախատեսվել գործող կարգի համաձայն առկա իրավական խնդիրների փոխարեն:

Օրենքով միաժամանակ սահմանափակվում է Բարձրագույն դատական խորհրդի հայեցողական լիազորությունը համապատասխան մասնագիտացման դատավորներ առանձնացնելու հարցում:

«Վ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Մարդու իրավունքների պաշտպանի իրավական կարգավիճակի սահմանների ու առանձնահատկությունների հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանում վիճարկվող դրույթները դիտարկվել են Սահմանադրության 2-րդ գլխի դրույթների՝ մարդու հիմնական իրավունքների և ազատությունների համատեքստում:

Սահմանադրական դատարանում վիճարկվող օրենքների կարգավորումների սահմանադրականությունը դիտարկվել է անձի արդար դատաքննության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքների հետ կապի տեսանկյունից՝ հետևյալ իրավական հարցադրումների շրջանակներում:

- *Մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը և «Վ փարածքում դատարանների թույլտվությամբ անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննելու համար քրեական մասնագիտացման դատավորներ առանձնացնելու կարգավորումները որքանով են ապահովում դատարանների անկախության և անաչառության պահանջները, ինչպես նաև որքանով են հավասարակշռված՝ դատավորների մասնագիտացման հնարավոր ռիսկերի չեզոքացման առումով:*

- *Օրենքով քրեական մասնագիտացման առանձին դատավորների համալրման նպատակով ուսումնառության ժամկետների ու որակավորման գրավոր քննության*

առաջադրանքների առավել նվազ պահանջների սահմանումը որքանով է բավարարում դատավորների համար օրենսդրությամբ սահմանված պահանջներն ու պատշաճ մասնագիտացվածությունը:

- Արդյոք Բարձրագույն դատական խորհրդի՝ համապատասխան մասնագիտացման դատավորներից առանձին տեսակի գործեր քննելու համար դատավորներ ընտրելու հայեցողական լիազորության սահմանափակումը համահունչ է արդար դատաքննության իրավունքի, ինչպես նաև դատական պաշտպանության իրավունքի կարևորագույն բաղադրիչի՝ «անկախ և անաչառ դատարանի» սահմանադրական պահանջին:

• Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի «Դատական իշխանության անկախության և դատավորների անփոփոխելիության չափորոշիչների մասին» թիվ 1 (2001) կարծիքի 10-րդ կետի համաձայն՝ դատավորների անկախությունը նրանց սեփական շահերի համար տրված բացարձակ իրավասություն կամ արտոնություն չէ: Այն բխում է իրավունքի գերակայության և այն անձանց շահերից, որոնք փորձում են օգտվել արդարադատությունից և արդարադատություն են ակնկալում: Երբ որոշվում է, թե արդյոք տրիբունալը կարող է համարվել անկախ, Եվրոպական դատարանը հաշվի է առնում հետևյալ չափանիշները՝ տրիբունալի անդամների նշանակման կարգը, նրանց պաշտոնավարման ժամկետը, արտաքին ճնշումներից պաշտպանության երաշխիքների առկայությունը և արդյոք տրիբունալն օժտված է անկախության արտաքին հատկանիշներով²³:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի «Դատավորների մասնագիտացման մասին» թիվ 15 (2012) կարծիքի²⁴ 5-րդ կետի համաձայն՝ նույն այդ Կարծիքի շրջանակում «նեղ մասնագետ դատավոր» է համարվում այն դատավորը, որը զբաղվում է իրավունքի սահմանափակ *ոլորտներով* (օրինակ՝ քրեական, հարկային, ընտանեկան, տնտեսական և ֆինանսական իրավունք), և որը զբաղվում է որոշակի ոլորտներում հատուկ փաստական հանգամանքներին վերաբերող գործերով (օրինակ՝ սոցիալական, տնտեսական կամ ընտանեկան իրավունքի վերաբերյալ գործերով): Այսինքն, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը դատավորների մասնագիտացումը հնարավոր է համարում ըստ ոլորտների (հարկային իրավունք, ընտանեկան իրավունք և այլն):

Սկզբունքորեն դատավորները պետք է ունակ լինեն որոշում կայացնելու բոլոր ոլորտների գործերի մասով: Օրենքի և դրա հիմքում ընկած սկզբունքների մասին նրանց

²³ Տե՛ս Լանգբորգերն ընդդեմ Շվեդիայի (Langborger v. Sweden) գործով 1989 թվականի հունիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 11179/84, կետ 32: Կլեյնը և Ուրիշներն ընդդեմ Նիդերլանդների (Kleyn and Others v. The Netherlands) գործով 2003 թվականի մայիսի 6-ի վճիռը, գանգատներ թիվ 39343/98, 39651/98, 43147/98 և 46664/99, կետ 190:

²⁴ Հասանելի է <https://rm.coe.int/ccje-opinion-2012-no-15-on-the-specialisation-of-judges/16809f0078> հղումով:

ընդհանուր գիտելիքները, ողջախոհությունը (...) ի գորու են դարձնում կիրառելու օրենքը բոլոր ոլորտներում, այդ թվում՝ մասնագիտացված ոլորտներում: «Լայն պրոֆիլի դատավորի» դերը երբեք չպետք է թերագնահատել²⁵:

Ավելին, Կարծիքի 37-րդ կետում նշվել է, որ նեղ մասնագետ դատավորներից իրավական հատուկ ոլորտների բարդ և առանձնահատուկ պահանջների բավարարում պահանջելն այլ խնդիր է և տարբերվում է հատուկ, ժամանակավոր (ad hoc) և *բացառիկ իրավասությունների դատարաններ* հիմնելուց, որոնց պահանջն առաջանում է կոնկրետ կամ հատուկ հանգամանքներում: Նման դատարանները պարունակում են պոտենցիալ վտանգ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված երաշխիքների առումով:

Ուստի, Օրենքով դատավորների առանձնացումը ոչ թե ըստ ոլորտային առանձնահատկությունների, այլ ըստ առանձին ինստիտուտների՝ առանց բավարար հիմնավորումների ու համոզիչ փաստարկվածության, տարակուսանքի տեղիք է տալիս: **Չփարատված է մնում մտահոգությունն առ այն, թե որքանով է դատավորների նման առանձնացումը բխում օբյեկտիվ չափանիշից և որքանով է այն նպաստելու մասնագիտացում ենթադրող հարցերի առավել պրոֆեսիոնալ, անկախ ու անաչառ քննությանը:**

Այս մտահոգությունը բխում է նաև օրենքի կարգավորումների միասնական տրամաբանության բացակայության խնդրից այն առումով, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը քննվելու են թե՛ Երևանի, թե՛ մարզերի քրեական մասնագիտացման դատավորների, իսկ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները՝ միայն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորների կողմից: Դրան զուգահեռ, Երևանում մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող առանձին դատավորների միջև այլ գործեր չեն բաշխվում, իսկ մարզերում մինչդատական քրեական վարույթին վերաբերող գործեր քննող դատավորները քննում են նաև քրեական մասնագիտացման դատավորին վերապահված այլ գործեր:

- Երկրորդ հարցադրման առնչությամբ հարկ է նշել, որ «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքի կարգավորումների համաձայն՝ դատավորների թեկնածությունների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց ուսումնառության ժամկետի տևողությունն առնվազն *յոթ ամիս* է, իսկ փորձաշրջանը՝ *երեք ամիս*:

²⁵ Տե՛ս նույն Կարծիքը, կետ 26:

Բացի այդ, դատավորների նոր հաստիքների համալրման համար Օրենքով նախատեսվել են պարզեցված պայմաններ: Օրինակ, սահմանվել է, որ դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների ենթաբաժնի համալրման նպատակով որակավորման գրավոր քննության առաջադրանքները կազմվում են *թեստային առաջադրանքների*՝ հակիրճ իրավական հիպոթետիկ խնդիրների միջոցով՝ դրանց ճիշտ լուծումները հավակնորդի կողմից ընտրելու պահանջով: Այսինքն, *թեստային առաջադրանքները որպես այլընտրանք են նախատեսվել գործող կարգի համաձայն առկա իրավական խնդիրների փոխարեն*:

Այս կապակցությամբ, հարկ է նշել, որ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/32 և 1985 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 40/46 բանաձևերով հաստատված «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների» 10-րդ կետի համաձայն՝ դատական պաշտոնում ընտրված անձինք պետք է ունենան բարոյական բարձր հատկանիշներ և ընդունակություններ, նաև **համապատասխան պատրաստվածություն և որակավորում**՝ իրավունքի բնագավառում²⁶:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի «Դատական իշխանության անկախության և դատավորների անփոփոխելիության չափորոշիչների մասին» թիվ 1 (2001) կարծիքի 22-րդ կետի համաձայն՝ այն երկրներում, որոնք ունեն առաջխաղացման հիմքով դատական համակարգեր, դատավորի նախնական նշանակումը սովորաբար պայմանավորված է քննություններում ունեցած օբյեկտիվ հաջողությամբ: Այս դեպքում, ի թիվս այլնի, *կարևորություն են ստանում հետևյալ հարցերը*.

- արդյոք մրցակցային քննությունները բավարար են,
- արդյոք չպե՞տք է գնահատել անձնական հատկանիշները,
- արդյոք չպե՞տք է ուսուցանել ու գնահատել գործնական հմտությունները²⁷:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի «Ազգային և Եվրոպական մակարդակներում դատավորների պատշաճ նախնական և ընթացիկ վերապատրաստման մասին» թիվ 4 (2003) կարծիքի 3-րդ կետի համաձայն՝ առանցքային է, որ իրավաբանական համալիր կրթություն ստանալուց հետո ընտրված դատավորներն անցնեն **մանրամասն, խոր, բազմաբնույթ վերապատրաստում**, որպեսզի բավարար մակարդակով կարողանան իրականացնել իրենց պարտականությունները²⁸:

²⁶ Հասանելի է <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/independencejudiciary.aspx> հղումով:

²⁷ Հասանելի է <https://rm.coe.int/opinion-no-1-ccje-armenian-1-2001-/16808e6440> հղումով:

²⁸ Հասանալի է <https://rm.coe.int/no4-armenian-4-2003-/16808e6463> հղումով:

Այսպիսով, Օրենքով քրեական մասնագիտացման առանձին դատավորների համար ուսումնառության ժամկետների ու որակավորման գրավոր քննության առաջադրանքների առավել նվազ պահանջների սահմանումը ողջամտորեն առաջ է բերում պատշաճ մասնագիտական պատրաստվածության խնդիր, ինչն իր հերթին պետք է դիտարկել դատարանի անաչառության անհրաժեշտ նախապայմանների պահպանման տեսանկյունից:

- Վերջին հարցադրման կապակցությամբ պետք է նշել, որ դատավորի անկախության հիմնարար արժեքը երաշխավորող սահմանադրաիրավական դրույթների հիմքում ընկած բազմաթիվ միջազգային-իրավական փաստաթղթերի²⁹ համալիր վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 քրեական գործով կայացված որոշմամբ, ի թիվս այլնի, եկել է այն հետևության, որ դատավորների կարգավիճակի, նրանց նշանակման կամ լիազորությունների դադարեցման հարցեր քննարկող ցանկացած մարմին պետք է օժտված լինի անհրաժեշտ անկախությամբ:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի դիրքորոշման համաձայն՝ սկզբունքորեն, դատական խորհուրդները կամ նմանատիպ այլ մարմինները կարևոր նշանակություն ունեն տվյալ երկրում դատական համակարգի անկախությունն ապահովելու և երաշխավորելու համար, և որպես այդպիսին **դրանք պետք է լինեն անկախ և անկողմնակալ**³⁰:

Վենետիկի հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ CDL-AD(2018)015 կարծիքի 37-րդ կետի համաձայն՝ Դատական խորհրդի պատշաճ գործունեությունն այն իրավական համակարգերում, որտեղ այն գոյություն ունի, դատական համակարգի անկախության էական երաշխիքներից է³¹:

Այսպիսով, Օրենքով համապատասխան մասնագիտացման դատավորներ առանձնացնելու հարցում Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող անկախ մարմնի հայեցողական լիազորության սահմանափակմամբ նման կաշկանդվածությունը ևս առաջ է բերում

²⁹ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/32 և 1985 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 40/46 բանաձևերով հաստատված «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները» և դրա հավելվածը՝ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից թիվ 2200A(XXI) բանաձևով հաստատված «Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները», «Դատավորների կարգավիճակի մասին» 1998 թվականի հուլիսի 10-ի եվրոպական խարտիան, եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիրը, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1994 թվականի հոկտեմբերի 13-ի՝ «Դատավորների անկախության, արդյունավետության ու դերի մասին» թիվ R(94)12 հանձնարարագիրը:

³⁰ Հասանելի է <https://www.osce.org/files/f/documents/f/c/315946.pdf> հղումով, կետ 37:

³¹ Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2018\)015-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2018)015-e) հղումով:

Բարձրագույն դատական խորհրդի անկախության, հետևաբար նաև դատարանների անկախության ապահովման հարց:

Այսպիսով, դատարանների անկախության ու անաչառության միջազգային և ներպետական չափանիշների դիտարկմամբ առաջ քաշված մտահոգությունները հիմք են տալիս եզրահանգելու, որ վիճարկման առարկա դարձած Օրենքի կարգավորումները կարող են վտանգել Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ամրագրված՝ անկախ և անաչառ դատարանի կողմից գործի քննության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքները:

Նշված գործով Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունիսի 12-ին կայացրել թիվ ՍԴՌ-1603 որոշումը³², որով Ազգային ժողովի կողմից 2021 թվականի փետրվարի 3-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող:

3. ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և դրա հետ փոխկապակցված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

ՀՀ նախագահը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասի» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 68-րդ հոդվածի 1-ին մասի և 73-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 2021 թվականի ապրիլի 12-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի, և դրա հետ փոխկապակցված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների՝ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 78-րդ, 79-րդ և 173-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

³² Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1603.pdf> հղումով:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածով նախատեսվում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Բարձրագույն դատական խորհրդին դիմելու՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հնարավորությունը վերջիններիս մասնակցությամբ կոնկրետ գործով, եթե առկա է այդ սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին, 1.1-ին կամ 2-րդ կետերով նախատեսված էական կարգապահական խախտման հիմք և պահպանված են Օրենսգրքի 144-րդ հոդվածով սահմանված ժամկետները:

Ստացվում է, որ միևնույն մարմինը՝ Բարձրագույն դատական խորհուրդը, միաժամանակ հանդես է գալու և՛ կարգապահական վարույթ հարուցողի, և՛ հարուցված վարույթը քննողի, և՛ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկողի դերում:

Օրենքով նախատեսվել է վարչական, քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից առանձին տեսակի կամ բարդության գործեր քննող դատավորների առանձնացման հնարավորություն: Ընդ որում, առանձին տեսակի կամ բարդության գործերի ցանկը, յուրաքանչյուր դատարանի համար նման գործեր քննող դատավորների քանակը և ընտրության կարգի սահմանումը վերապահվել է Բարձրագույն դատական խորհրդին:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ մեղադրյալի կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարվելու դեպքում նրա նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց, կամ կիրառված խափանման միջոցը կարող է փոխարինվել ավելի խիստ միջոցով:

Սահմանվել է նաև որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակման հնարավորություն: Ընդ որում՝ որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակումն անձի կողմից իր դատավարական իրավունքների պարբերաբար չարաշահման դեպքում դատարանի որոշմամբ դրանց իրականացման ժամանակային կամ քանակական պայմանների սահմանումն է: Նշված դատավարական սանկցիան կարող է կիրառվել միայն միջնորդություն հարուցելու, բացարկ հայտնելու, քրեական գործին կցելու և հետազոտելու համար նյութեր ներկայացնելու, քրեական գործի նյութերին ծանոթանալու և դրանցից ցանկացած ծավալի տեղեկություններ դուրս գրելու, ելույթ ունենալու, պաշտպանից հրաժարվելու և պաշտպանի լիազորությունները դադարեցնելու իրավունքները պարբերաբար չարաշահելու դեպքում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի իրավական կարգավիճակի սահմանների ու առանձնահատկությունների հաշվառմամբ՝ վիճարկվող դրույթները դիտարկվել են

Սահմանադրության 2-րդ գլխի դրույթների՝ մարդու հիմնական իրավունքների և ազատությունների համատեքստում:

Մարդու իրավունքների պաշտպանը Սահմանադրական դատարանում վիճարկվող կարգավորումների սահմանադրականությունը դիտարկել է անձի արդար դատաքննության իրավունքի և համաչափության ու իրավական որոշակիության սկզբունքների հետ կապի տեսանկյունից՝ հետևյալ իրավական հարցադրումների շրջանակներում.

- առանձին տեսակի կամ բարդության գործեր քննող դատավորների առանձնացման վերաբերյալ կարգավորումները՝ դատավորների մասնագիտացման միջազգային իրավական մոտեցումների և արդար դատաքննության իրավունքի համատեքստում,

- Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և պատասխանատվության հարցը լուծելու գործառույթների միաժամանակյա վերապահումը Բարձրագույն դատական խորհրդին, ինչպես նաև վարույթ նախաձեռնելու իրավական շեմը՝ արդար դատաքննության իրավունքի պահանջներին համապատասխանության տեսանկյունից:

Այսպես, ինչպես արդեն նշվել է՝ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը դատավորների մասնագիտացումը հնարավոր է համարում ըստ ոլորտների (հարկային իրավունք, ընտանեկան իրավունք և այլն):

Թեև պետությունն ունի ընդհանուր դատական համակարգից որոշակի մասնագիտացման դատավորներ կամ դատարաններ առանձնացնելու հայեցողություն, որոնց քննության ենթակա գործերի ոլորտային առանձնահատկություններն արդարացնում են կառուցվածքային նման լուծումներ տալը, սակայն տվյալ դեպքում խոսքը ոչ թե ոլորտի, իրավունքի ճյուղի կամ կոնկրետ տեսակի գործերի մասին է, այլ **գործերի բարդության: Չի կարող առանձին բարդության գործեր քննող դատավորների առանձնացումը դիտարկվել որպես նրանց մասնագիտացում:** Ուստի, տարակուսելի է, թե վարչական, քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից առանձին տեսակի կամ բարդության գործեր քննող դատավորների առանձնացմամբ ինչպես է ապահովվելու արդարադատության բարձր որակը:

Ուշագրավ է, որ Օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի վարույթում առանձնակի բարդության գործի առկայության դեպքում դատավորը կարող է դիմել Բարձրագույն դատական խորհուրդ՝ առաջարկելով իր անուն-ազգանունը ժամանակավորապես հանել բաշխման ցանկից կամ սահմանել իրեն բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ: Այսինքն, առկա կարգավորումների պայմաններում դատավորն ինքն է գնահատում իր վարույթում առկա գործերի բարդությունը և ըստ այդմ դիմում Բարձրագույն դատական խորհուրդ:

«Առանձին բարդության գործեր» եզրույթի գործածումը վիճարկվող դրույթի համատեքստում խնդրահարույց է իրավական որոշակիության տեսանկյունից:

Մասնավորապես, առկա չեն չափանիշներ, որոնք առանձին տեսակի կամ բարդության գործերի ցանկը սահմանելիս Բարձրագույն դատական խորհրդին (ԲԴԽ) հնարավորություն կտան որոշելու, թե որ գործերը կարող են բարդ համարվել, ինչպես է որոշվելու գործերի բարդության աստիճանը և այլն: Ուստի, բացահայտված չէ, թե Բարձրագույն դատական խորհուրդն ինչպես է առանց տիրապետելու դատարաններում քննվող կոնկրետ գործերի փաստական հանգամանքների առանձնահատկություններին, սահմանելու առանձին տեսակի կամ բարդության գործերի ցանկ:

Այսպիսով, վեր հանված մտահոգությունները հիմք են տալիս եզրահանգելու, որ վիճարկման առարկա դարձած Օրենսգրքի կարգավորումները կարող են վտանգել Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված՝ անկախ և անաչառ դատարանի կողմից գործի քննության սահմանադրական իրավունքը:

Անդրադառնալով բարձրացված 2-րդ իրավական հարցադրմանը՝ հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և պատասխանատվության հարցը լուծելու գործառույթները Բարձրագույն դատական խորհրդին վերապահելու խնդիրը դիտարկել է միջազգային այն իրավական մոտեցումների և կարգավորումների տեսանկյունից, որոնք կանխորոշում են դատավորի կարգապահական պատասխանատվության հարցի քննարկման շրջանակներն ու վարույթի ընթացակարգային երաշխիքները:

Այսպես, «Դատավորի վարքագծի վերաբերյալ Բանգալորյան սկզբունքների արդյունավետ իրականացման միջոցների վերաբերյալ» փաստաթղթի 15.3-րդ կետի համաձայն՝ պետք է **առանձին** անհատ կամ մարմին լինի, որը պատասխանատու կլինի բողոքներ և դրանց վերաբերյալ դատավորի պատասխան դիրքորոշումն ստանալու և նման դիրքորոշումների լույսի ներքո բողոքները քննարկելու, ինչպես նաև պարզելու համար, թե արդյոք կան բավարար հիմքեր դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար: Նման եզրահանգման հանգելու դեպքում անձը կամ մարմինը պետք է հարցը փոխանցեն կարգապահական մարմնին³³:

Դատական իշխանության խորհուրդների եվրոպական ցանցի «Նվազագույն դատական չափանիշներ V. Կարգապահական վարույթներ և դատավորների պատասխանատվությունը» վերտառությամբ 2014-2015 թվականների զեկույցի համաձայն՝ պետք է լինեն առանձին մարմիններ՝

- ա) քննելու և որոշելու համար, թե կա արդյոք առերևույթ դեպք,
- բ) կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

³³ Հասանելի է <https://www.icj.org/wp-content/uploads/2015/08/IIG-Measures-effective-implementation-Bangalore-Principles-2010.pdf> հղումով:

Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջով դիմումներ ստանալու և դրանց ընթացքն ապահովելու համար **առանձին մարմին պետք է լինի (...)**³⁴: Նույն զեկույցի համաձայն՝ երբ դիմում կարող է ներկայացնել ցանկացած անձ, ապա պետք է գործի մեխանիզմ կամ դիմումներն ամփոփող ընթացակարգ, որի միջոցով դիմումը կարող է մերժվել: Այս մեխանիզմի կամ ընթացակարգի նպատակը դատական իշխանության առջև ուղղակիորեն պատասխանատու անձի կամ մարմնի նկատմամբ վերահսկողությունն է, որպեսզի ապահովվի անհեթեթ կամ անհիմն դիմումների արագ մերժումը³⁵:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 19-ի «Դատավորների մասնագիտական վարքագիծը կարգավորող սկզբունքների և կանոնների, մասնավորապես՝ էթիկայի, անհամատեղելի վարքի և անկողմնակալության վերաբերյալ» թիվ 3 կարծիքի 67-րդ կետի համաձայն՝ անհատներն իրենք չեն կարող իրավունք ունենալ կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգ նախաձեռնելու կամ այդ մասին պնդելու: **Պետք է լինի զտող մեխանիզմ, այլապես դատավորները կարող են հաճախ առերեսվել կարգապահական ընթացակարգերին**³⁶:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2013 թվականի մարտի 11-ի թիվ CDL-AD(2013)005 կարծիքի 68-րդ կետի համաձայն՝ վտանգավոր կլինի յուրաքանչյուր անձի՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու պահանջով դիմելու իրավունք տալը (right to initiate proceedings)³⁷:

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականների» 26-րդ կետի համաձայն՝ պետք է գոյություն ունենա դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներում որոշումներ կայացնող հատուկ անկախ մարմին (դատարան, հանձնաժողով կամ խորհուրդ): **Դատավորների կարգապահությանն առնչվող խնդիրներով որոշումներ կայացնող մարմինները չպետք է կարգապահական վարույթներ հարուցելու իրավունք**

³⁴ Հասանելի է

https://www.ency.eu/images/stories/pdf/GA/Hague/encj_report_minimum_standards_v_adopted_ga_june_2015.pdf հղումով, էջ 28:

³⁵ Հասանելի է

https://www.ency.eu/images/stories/pdf/GA/Hague/encj_report_minimum_standards_v_adopted_ga_june_2015.pdf հղումով, էջ 25-26:

³⁶ Հասանելի է <https://rm.coe.int/16807475bb> հղումով:

³⁷ Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2013\)005-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2013)005-e) հղումով:

ունենան: Ավելին, դրանց կազմում չպետք է լինեն այնպիսի անդամներ, ովքեր օժտված կլինեն կարգապահական վարույթներ հարուցելու իրավասությամբ³⁸:

Այսպիսով, վերոնշյալ միջազգային փաստաթղթերում արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով Սահմանադրական դատարանում քննության առարկա դարձած կարգավորումը՝ հարկ է նշել, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դիմումի հիման վրա Բարձրագույն դատական խորհրդին կարգապահական վարույթ հարուցելու լիազորության վերապահումը, վարույթ նախաձեռնելու իրավական շեմի իջեցումն առաջ են բերում արդար դատաքննության ընթացակարգային երաշխիքների չապահովման հարց:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դիտարկմամբ՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից Բարձրագույն դատական խորհրդին դիմելը խնդրահարույց է Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկող դատական մարմնի անկախության և անաչառության տեսանկյունից: Խնդիրը, մասնավորապես, պայմանավորված է նրանով, որ **երբ մի մարմին հարուցում է վարույթ, որի քննությունը ևս այդ մարմինն է իրականացնելու, ապա կարող է ողջամիտ մտահոգություն առաջանալ, որ այդ մարմինն արդեն ունի ձևավորած կանխակալ վերաբերմունք հարուցված վարույթի ելքի վերաբերյալ:** Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու ընթացակարգային այս «պարզեցումից» զատ, իջեցվում է հիմքերի բավարարության իրավական շեմը՝ ակնհայտ անհիմն չլինելու և «առաջին հայացքից» կարգապահական խախտման առկայության առումով:

Այսպիսով, Մարդու իրավունքների պաշտպանի գնահատմամբ՝ խնդիրը դիտարկվել է միակողմանիորեն: Մինչդեռ, կարևոր է, որ խնդրի վերացմանն ուղղված լուծումները միաժամանակ համադրելի լինեն միջազգային իրավական մոտեցումների հետ ու հաշվի առնեն առկա մտահոգությունները և այն ռիսկերն ու խնդիրները, որոնց կարող է հանգեցնել Բարձրագույն դատական խորհրդին ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դիմումի հիման վրա կարգապահական վարույթներ հարուցելու լիազորության վերապահումը:

Ավելին, Օրենքով նախատեսված լուծումների դիտարկումը Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկող դատական մարմնի անկախության և անաչառության հարթությունում ավելի է մեծացնում հիմնավորվածության պահանջը՝ ցույց տալու, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց անմիջապես Բարձրագույն դատական խորհրդին դիմելու իրավունք վերապահելը, ինչպես նաև միևնույն մարմնի կողմից և՛

³⁸ Հասանելի է <https://www.osce.org/files/f/documents/a/3/73487.pdf> հղումով, կետ 26:

կարգապահական վարույթ հարուցելը, և՛ հարուցված վարույթը քննելը, և՛ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելն անհամատեղելի չեն լինի Բարձրագույն դատական խորհրդի անկախության ու անաչառության պահանջների հետ:

Նշված գործով Սահմանադրական դատարանը 2021 թվականի հոկտեմբերի 12-ին կայացրել է թիվ ՍԴՌ-1613 որոշումը³⁹, որով Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 19-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և հարակից՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքները՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի 2-րդ, 9-19-րդ հոդվածների, 20-րդ հոդվածի 2 և 4-րդ մասերի, ինչպես նաև՝ «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի մասով՝ ճանաչվել են Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասին հակասող:

³⁹ Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1613.pdf> հղումով:

4. ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից մյուս օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

ՀՀ նախագահը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասի» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և 73-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 2021 թվականի մայիսի 6-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի, ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից մյուս օրենքների՝ Սահմանադրության 28-րդ, 29-րդ, 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության» մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանվել է, որ հակակոռուպցիոն դատարանի դատավորին, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, նույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 70 տոկոսի չափով, իսկ վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործեր քննող առանձին դատավորներին և վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորներին⁴⁰, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, նույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի չափով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

⁴⁰ Այսուհետ՝ հակակոռուպցիոն դատարանի դատավորներ:

Մարդու իրավունքների պաշտպանը Սահմանադրական դատարանում վիճարկվող կարգավորումների սահմանադրականությունը դիտարկել է խտրականության արգելքի հետ կապի տեսանկյունից՝ հետևյալ իրավական հարցադրման շրջանակներում.

- ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության» մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքով հակակոռուպցիոն դատարանի դատավորներին և գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորներին պաշտոնային դրույքաչափի համապատասխանաբար 70 և 60 տոկոսի չափով հավելումներ տալը որքանով է ապահովում խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքի պահանջները:

Օրենքով հակակոռուպցիոն գործեր քննող դատավորների համար այլ դատավորների համեմատությամբ նախատեսվել է վարձատրության ավելի բարձր շեմ, ինչն անհրաժեշտ է դիտարկել խտրականության արգելքի սահմանադրաիրավական սկզբունքի ապահովման տեսանկյունից:

Այսպես, Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Խտրականությունը որոշակի անձանց, կազմակերպությունների կամ պետությունների իրավունքների սահմանափակումն է կամ դրանցից զրկելը՝ հիմք ընդունելով ռասայական, ազգային, սեռային, պետական պատկանելությունը, ինչպես նաև գույքային դրությունը, քաղաքական և կրոնական համոզմունքները և այլ հատկանիշներ⁴¹: Խտրականության հասկացությանն անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ արձանագրելով, որ խտրականությունը տարբեր վերաբերմունքի դրսևորումն է համեմատաբար նույն իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ առանց որևէ օբյեկտիվ կամ հիմնավորված պատճառի⁴²:

Սահմանադրական դատարանի 2010 թվականի մայիսի 4-ի թիվ ՍԴՈ-881 որոշմամբ արտահայտված դիրքորոշման համաձայն՝ խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը **զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից**: Սահմանադրական դատարանի 2015 թվականի հուլիսի 7-ի թիվ ՍԴՈ-1224 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ խտրականությունն առկա է

⁴¹ Տե՛ս <http://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf>, էջ 174-175:

⁴² Տե՛ս Վիլլիսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Willis v. United Kingdom) գործով 2002 թվականի հունիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 36042/97, կետ 48: Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետ 199:

բոլոր այն դեպքերում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ *ձեռք են բերում արտոնություններ:* Դատավորների համընդհանուր խարտիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը պետք է ստանա բավարար վարձատրություն իրական տնտեսական անկախություն պահպանելու համար: Դատավորի վարձատրությունը չպետք է կախված լինի դատավորի աշխատանքի արդյունքներից և չպետք է կրճատվի նրա դատական ծառայության ընթացքում⁴³: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R (94) 12 հանձնարարականի համաձայն՝ դատավորների վարձատրությունը համահունչ պետք է լինի իրենց մասնագիտությանը և ստանձնած պարտականություններին⁴⁴: Նույնաբովանդակ դիրքորոշում է հայտնել նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) իր 2010 թվականի մարտի 10-ի թիվ CDL-AD(2010)004 զեկույցում՝ հավելելով, որ դատավորների համարժեք վարձատրությունն անհրաժեշտ է դատավորներին արտաքին անհարկի միջամտություններից պաշտպանելու համար: Վարձատրությունը պետք է հիմնված լինի ընդհանուր ստանդարտների, օբյեկտիվ և թափանցիկ չափանիշների վրա, ոչ թե որոշվի դատավորի անհատական կատարողականի գնահատման հիման վրա: Բռնույթները, որոնք հայեցողության տարրեր են պարունակում, պետք է բացառվեն⁴⁵: Նույն դիրքորոշումը վերահաստատվել է նաև Վենետիկի հանձնաժողովի՝ «Դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ ներկայացված կարծիքում, որտեղ շեշտվել է, որ բռնույթները և ոչ ֆինանսական բնույթի շահույթները կարող են վտանգ ներկայացնել դատավորների անկախության համար⁴⁶:

Դատավորների անկախությունը պետք է կապված լինի դատավորների վարձատրության և այլ նյութական և ֆինանսական երաշխիքների հետ⁴⁷:

«Դատավորի կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայի 6.2-րդ համաձայն՝ դատավորների վարձատրության չափը կարող է կախված լինել ծառայության տևողությունից, իր մասնագիտական կարողությունների շրջանակներում դատավորին վերապահված պարտականությունների բնույթից և նրան վերապահված առաջադրանքների

⁴³ Հասանելի է <https://www.icj.org/wp-content/uploads/2014/03/IAJ-Universal-Charter-of-the-Judge-instruments-1989-eng.pdf> հղումով:

⁴⁴ Հասանելի է https://www.euromed-justice.eu/en/system/files/20090123125232_recR%2894%2912e.pdf հղումով:

⁴⁵ Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2010\)004-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2010)004-e) հղումով, կետ 46:

⁴⁶ Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2017\)019-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2017)019-e) հղումով, կետ 60:

⁴⁷ Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL\(2010\)113-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL(2010)113-e) հղումով:

կարևորությունից: Նույն խարտիայի բացատրական հուշագրի համաձայն՝ նման առաջադրանքները, որոնք արդարացնում են ավելի բարձր վարձատրությունը, պետք է գնահատվեն թափանցիկ չափանիշների հիման վրա, որպեսզի հնարավոր լինի խուսափել դատավորների նկատմամբ տարբերակված վերաբերմունքից (...)⁴⁸:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (CCJE-GT) 15-րդ կարծիքում արտահայտված դիրքորոշման համաձայն՝ **ընդհանուր և հատուկ մասնագիտացման դատավորների հավասար կարգավիճակ ունենալու սկզբունքը պետք է տարածվի նաև վարձատրության վրա**⁴⁹: Նույն կարծիքում տեղ գտած դիրքորոշման համաձայն՝ **ցանկացած լրացուցիչ աշխատավարձի կամ այլ տեսակի վարձատրության տրամադրումը՝ պայմանավորված դատավորի միայն հատուկ մասնագիտացման հանգամանքով, արդարացված չէն թվում, քանի որ ստանձնած պարտավորությունների բեռը և մասնագիտության առանձնահատկությունները, որպես կանոն, հավասար են ընդհանուր և հատուկ մասնագիտացման դատավորների համար**: Լրացուցիչ աշխատավարձը կամ այլ տեսակի վարձատրությունը կարող են արդարացված լինել, երբ հատուկ սահմանված հիմքերը թույլ են տալիս եզրակացնելու, որ հատուկ մասնագիտացված դատավորի վրա դրված պարտավորությունների բեռն իրոք պահանջում է նման հատուցում⁵⁰:

Օրենքի ընդունման հիմնավորումների համաձայն՝ բազմաթիվ կոռուպցիոն գործեր, մասնավորապես այնպիսիները, որոնք ներառում են բազմաթիվ ֆինանսական գործարքներ և տարաբնույթ սխեմաներ, շատ ավելի բարդ են քննել դատավորների համար, քան սովորական քրեական գործերը: Հետևաբար, նման գործերով մասնագիտացված դատարանի ստեղծումը կոչված է ոչ միայն բարելավելու արդարադատության արդյունավետությունը, այլ նաև արդարադատության որակը և հիմնավորվածությունը: Հակակոռուպցիոն մասնագիտացման դատավորներին ներկայացվում են առավել խիստ պահանջներ, վերջիններիս աշխատանքը կապված է լինելու առավել ռիսկային, արտաքին ազդեցության տեսանկյունից խոցելի ոլորտի հետ, ինչն արդարացնում է հակակոռուպցիոն դատավորների համար առավել բարձր վարձատրության նախատեսումը⁵¹:

Օրենքի ընդունման հիմնավորումներով հակակոռուպցիոն դատավորների կողմից քննվող գործերի բարդությունը ֆինանսական գործարքների ու սխեմաների ուսումնասիրությամբ պայմանավորելը Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ լիարժեք չի արտացոլում ո՛չ դատարանի կողմից իրավական ուսումնասիրության և գնահատման առարկա հանգամանքների բարդությունը, ո՛չ էլ դրա օրինաչափ կապը ՀՀ քրեական օրենսգրքի N 6 հավելվածում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների

⁴⁸ Հասանելի է <https://rm.coe.int/16807473ef> հղումով:

⁴⁹ Հասանելի է <https://rm.coe.int/16807477d9> հղումով, կետ 55:

⁵⁰ Հասանելի է <https://rm.coe.int/16807477d9> հղումով, կետ 55:

⁵¹ Հասանելի է http://www.parliament.am/draftreading_docs7/K-785-6_DR2.pdf հղումով, էջ 6, 29:

հետ: Օրինակ՝ ֆինանսական համակարգի գործառնության առանձնահատկությունների, հետևաբար՝ դրանք շրջանցելու հանցավոր եղանակների ուսումնասիրության բարդությունն առհասարակ պայմանավորվում է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների բնույթով, իսկ վերջիններս կոռուպցիոն հանցագործություններ են դիտարկվում հանցակազմի մեկ տարրի՝ պաշտոնեական դիրքի օգտագործման հավաստմամբ:

Բացի այդ, Օրենքը դեռևս նախագծային փուլում Ազգային ժողովի փորձագիտական և վերլուծության վարչությունում իրավական փորձաքննություն է անցել, որի արդյունքում 2020 թվականի դեկտեմբերի 17-ին տրված եզրակացության համաձայն՝ անթույլատրելի է պաշտոնատար անձի ներգրավվածությամբ պայմանավորել գործերի բարդությունը: «Կոռուպցիոն գործերը շատ ավելի բարդ են դատավորների համար, քան «սովորական» քրեական գործերը» պնդումն ունի լրացուցիչ հիմնավորման և հստակեցման կարիք, ինչից բխում է նաև համապատասխան դատավորների վարձատրության շատ ավելի բարձր չափի նախատեսման լրացուցիչ օբյեկտիվ հիմնավորման անհրաժեշտությունը՝ հիմք ընդունելով այն, որ խտրականության արգելքի սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարվում միայն օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված տարբերակված մոտեցումը: Նույն եզրակացության համաձայն՝ նախագծերի փաթեթով նախատեսված կարգավորումները կարող են խնդրահարույց լինել ՀՀ Սահմանադրության որոշակիության, համաչափության և խտրականության արգելքի սկզբունքների տեսանկյունից⁵²:

Փաստորեն, սույն դիրքորոշմամբ վեր հանված մտահոգությունները բարձրաձայնվել են նաև Օրենքի նախագծի իրավական փորձաքննության արդյունքում տրված եզրակացությամբ, որով ևս հակակոռուպցիոն գործեր քննող դատավորների համար այլ դատավորների համեմատությամբ վարձատրության ավելի բարձր շեմ նախատեսելը խնդրահարույց է դիտարկվել ՀՀ Սահմանադրության խտրականության արգելքի սկզբունքի ապահովման տեսանկյունից:

Այսպիսով, դատարանների անկախության ու անաչառության միջազգային և ներպետական չափանիշների դիտարկմամբ առաջ քաշված մտահոգությունները հիմք են տալիս եզրահանգելու, որ վիճարկման առարկա դարձած Օրենքի կարգավորումները կարող են վտանգել Սահմանադրության 29-րդ հոդվածով ամրագրված՝ խտրականության արգելքի սկզբունքը:

Սահմանադրական դատարանի concourt.am կայքի «Նորություններ» բաժնում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականի հոկտեմբերի 12-ի նիստում Սահմանադրական դատարանը քննության է առել «Հանրապետության նախագահի դիմումի

⁵² Հասանելի է http://parliament.am/draft_history.php?do=showdiveval&Div=5&ID=12046 հղումով:

հիման վրա՝ 2021 թվականի ապրիլի 14-ին Ազգային ժողովի ընդունած՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից 8 օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը: Նշված գործով ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չի ընդունվել, ուստի՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի՝ դիմումը համարվում է մերժված⁵³:

5. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի և հարակից 22 օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

ՀՀ նախագահը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասի» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և 73-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 2021 թվականի ապրիլի 22-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի և հարակից 22 օրենքների՝ Սահմանադրության 28-րդ, 29-րդ և 38-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

Օրենքի 27-րդ հոդվածով սահմանվել է, որ հանրային բուհի կառավարման խորհուրդը բաղկացած է 9 անդամից: Ընդ որում՝ բուհի կառավարման խորհրդի անդամներից 4-ին առաջադրում է բուհի ակադեմիական խորհուրդը, իսկ 5-ին՝ համապատասխան լիազոր մարմինը: Նույն հոդվածով միաժամանակ սահմանվել է, որ կառավարման խորհրդի բուհի 4 անդամին նույն հոդվածով սահմանված ժամկետում չառաջադրելու կամ 4-ից պակաս առաջադրելու դեպքում կառավարման խորհրդի բուհի չառաջադրած անդամների համալրումն իրականացնում է համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը: Կառավարման խորհրդի նման համամասնության առկայության պայմաններում տրամաբանական է այն մտահոգությունը, որ այս կամ այն կերպ հնարավոր է, որ խաթարվի բարձրագույն կրթության և գիտության ոլորտի պետական քաղաքականության սկզբունքներից մեկը՝ բուհական ինքնավարությունը:

Օրենքի 6-րդ հոդվածով սահմանվել է, որ բուհն ունի ակադեմիական և կազմակերպական գործունեության, ինչպես նաև մարդկային և ֆինանսական ռեսուրսների

⁵³ Հասանելի է <https://concourt.am/armenian/news/index.htm> հղումով:

կառավարման ինքնավարություն նույն օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

Օրենսդրական այս կարգավորումների սահմանադրականությունը Մարդու իրավունքների պաշտպանը դիտարկել է Սահմանադրության 38-րդ հոդվածով ամրագրված՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի ապահովման տեսանկյունից՝ հետևյալ իրավական հարցադրումների շրջանակներում.

- Հանրային բուհերի կառավարման խորհրդի ինն անդամից հինգին համապատասխան լիազոր մարմնի կողմից նշանակելը որքանով է ապահովում բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի ապահովման Սահմանադրական պահանջը.

- Բուհի ակադեմիական և կազմակերպական գործունեության, ինչպես նաև մարդկային և ֆինանսական ռեսուրսների կառավարման ինքնավարությունն այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանելու հնարավորության նախատեսումը որքանով է ապահովում բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ *օրենքով սահմանված շրջանակներում* ինքնակառավարման իրավունքի ապահովման Սահմանադրական պահանջը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատությունն իրականացնում է իր ինքնավարությունը ինքնակառավարման և կոլեգիալության սկզբունքներով:

Կրթության ոլորտի միջազգային փաստաթղթերը կանխորոշել են բուհական ինքնավարության բովանդակային շրջանակներն ու դրա առնչությունը կրթության իրավունքի լիարժեք իրացմանը:

Այսպես, Եվրոպական համալսարանների ասոցիացիան, անդրադառնալով բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարությանը, նշում է, որ **ուսումնական հաստատությունների կառավարման մարմինները քննարկում և որոշում են երկարաժամկետ ռազմավարական հարցեր, ինչպիսիք են՝ կանոնադրություններն ու բյուջեն, ինչպես նաև ակադեմիական հարցեր, օրինակ՝ ուսումնական ծրագրերն ու առաջխաղացումները: Եթե այդ մարմիններում ընդգրկվում են նաև այնպիսի անդամներ, որոնք չեն ներկայացնում ուսումնական հաստատությունը և ներգրավված են հիմնարար**

ինստիտուցիոնալ որոշումների ընդունման հարցերում, կարևոր է, որ բուհերն իրենց խոսքն ասեն վերջիններիս նշանակման հարցում⁵⁴:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսական կազմի կարգավիճակի վերաբերյալ հանձնարարականի 19-րդ կետի համաձայն՝ **անդամ պետությունը նաև պարտավոր է պաշտպանել բարձրագույն ուսումնական հաստատություններին դրանց ինքնավարությունը արտաքին աղբյուրներից սպառնացող վտանգներից:**

Եվրոպայի Խորհուրդը «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» վերտառությամբ իր 2015 թվականի վերլուծական աշխատանքում նշել է, որ Հայաստանում պետք է մշակել բարձրագույն կրթությանը վերաբերվող նոր առաջնային օրենք, որով **պետք է ամրապնդվի բուհերի պատշաճ ինքնավարությունը՝ ներառելով կառավարության տարանջատումը բուհերի կառավարումից՝ հատկապես բուհերի կառավարման մարմինների անդամակցության մասով⁵⁵:** ՀՀ կառավարությունը պետք է հարգի բուհերի պատշաճ ինքնավարությունը ոչ միայն նոր օրենսդրության ընդունման ժամանակ, այլև իր հետագա քաղաքական գործունեության ընթացքում⁵⁶:

Հայաստանում տեղի ունեցող բարձրագույն կրթության բարեփոխումների շրջանակում Համաշխարհային բանկն իր 2013 թվականի զեկույցում անդրադարձել է բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարմանը: Զեկույցում քննարկվել է Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ կառավարման շրջանակներում դրանց կազմակերպչական ինքնավարության հարցերը: Մասնավորապես, Զեկույցի 40-րդ կետի համաձայն՝ **կառավարությունը, ընտրելով բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ներկայացուցչության մեծամասնությանը, ներգործում է բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման վրա⁵⁷:**

Նույն Զեկույցի 39-րդ կետում Համաշխարհային բանկը հանգել է եզրահանգման, ըստ որի՝ բարձրագույն ուսումնական հաստատության մարմիններին վերաբերող կանոններն ուշադիր ուսումնասիրելիս կբացահայտվի կառավարության ճնշող ներկայությունը համալսարանի ղեկավարման և կառավարման մեջ՝ վտանգելով համալսարանի ինքնավարությունը:

⁵⁴ Հասանելի է <https://www.university-autonomy.eu/dimensions/organisational/> հղումով:

⁵⁵ Հասանելի է <https://rm.coe.int/16804895e7> հղումով, էջ 5:

⁵⁶ Նույն տեղում, էջ 6:

⁵⁷ Հասանելի է

<https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/16531/776690WP0P127300governance000final.pdf?sequence=1&isAllowed=y> հղումով:

Բուհերի ինքնավարության հարցի կապակցությամբ ուշագրավ են նաև արտասահմանյան երկրների սահմանադրական դատարանների որոշումներում արտահայտված դիրքորոշումները: Այսպես, Մոլդովայի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2014 թվականի հունիսի 3-ի թիվ 19a/2014 որոշմամբ քննարկման առարկա է դարձել «Կրթության մասին» օրենքի այն նորմի սահմանադրականությունը, որի ուժով Մոլդովայի Հանրապետության Նախագահին առընթեր ուսումնական հաստատության ռեկտորը, ինչպես նաև Մոլդովայի Հանրապետության ներքին գործերի նախարարության, Պաշտպանության նախարարության և Տեղեկատվական ծառայության ու անվտանգության նախարարության ենթակայության բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորները նշանակվում են համապատասխան մարմինների կողմից⁵⁸:

Այսպիսով, բուհերի գործունեությանն ու առհասարակ կրթության ոլորտին առնչվող միջազգային իրավական փաստաթղթերի համալիր դիտարկումը ցույց է տալիս, որ բարձրագույն ուսումնական հաստատության ինքնավարությունն առանցքային դերակատարություն ունի բուհական համակարգի պատշաճ կազմակերպման և որպես հետևանք՝ կրթության իրավունքի երաշխավորման համար: Այդ ինքնավարությունը ներառում է նաև կառավարման ինքնուրույնությունը:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային բուհի կառավարման խորհուրդը մշտապես գործող մարմին է: Օրենքի 30-րդ հոդվածով սահմանվել են բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման խորհրդի լիազորությունները, որոնցից են, օրինակ՝ բուհի գործունեության տարեկան ծրագիրը, բուհի տարեկան բյուջեն ու դրա փոփոխությունները հաստատելու մասին որոշում կայացնելը, կառուցվածքային միավորներ ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու մասին որոշում կայացնելը, բուհի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելը, բուհի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին որոշումներ կայացնելը և այլն: Բուհի կառավարման խորհուրդը բուհի բարձրագույն մարմինն է, և վերջինիս տրված լիազորությունների հաշվառմամբ՝ կարելի է վստահաբար պնդել, որ կառավարման խորհուրդը սկզբունքային ազդեցություն ունի գործունեության հիմնարար ուղղությունների, ռազմավարական զարգացման, կառուցվածքային և ֆինանսավորման, հաստիքային միավորների բաշխման և այլ հարցերում:

Անհրաժեշտ է հատուկ արձանագրել, որ բուհերի ինքնակառավարման իրավունքի պատշաճ երաշխավորումը սկսվում է կառավարման խորհրդի անդամների նշանակումով՝ որպես ինքնակառավարման հիմք: Առանց այս կարևորագույն բաղադրիչի հնարավոր չի լինի ապահովել ընթացիկ ինքնակառավարումը: Այլ կերպ ասած՝ ինքնակառավարումը բուհի

⁵⁸Հասանելի է https://www.constcourt.md/public/ccdoc/hotariri/ru-h_19_2014_ru.pdf հղումով:

կառավարման բարձրագույն մարմնի ձևավորման և ընթացիկ գործունեության բաղադրիչների միավորում է:

Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառավարման խորհրդի նախագահին իրենց կազմից ընտրում են խորհրդի անդամները՝ *նիստին ներկա անդամների պարզ մեծամասնությամբ*: Օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանրային բուհի ռեկտորին ընտրում է կառավարման խորհուրդը՝ փակ գաղտնի քվեարկությամբ, *անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ*՝ հինգ տարի ժամկետով:

Այս կարգավորումները վկայում են այն մասին, որ կառավարման խորհրդի՝ լիազոր մարմնի կողմից նշանակված 5 անդամների ձայները կարող են վճռորոշ նշանակություն ունենալ այնպիսի կարևորագույն որոշումների կայացման հարցում, ինչպիսիք են կառավարման խորհրդի նախագահի և հանրային բուհի ռեկտորի ընտրությունը:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին հանրային բուհերի կառավարման խորհուրդների անդամների մեծամասնությանը նշանակելու իրավասություն վերապահելն անհամաչափ միջամտություն է բուհի ինքնակառավարման սահմանադրական իրավունքին, քանզի այդպիսով ամրագրվում է գործադիր իշխանության բարձրագույն մարմնի ուղիղ ազդեցությունը դրանց ինստիտուցիոնալ կառավարման համակարգի վրա:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ Օրենքով հանրային բուհերի կառավարման խորհրդի ինն անդամից հինգին համապատասխան լիազոր մարմնի կողմից նշանակելը ողջամտորեն առաջ է բերում բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի լիարժեք ապահովման և երաշխավորման հարց:

Անդրադառնալով սույն գործի շրջանակներում բարձրացված 2-րդ հարցադրմանը՝ հարկ է նշել, որ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բուհը, նույն օրենքով *և այլ նորմատիվ* իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան ունի ակադեմիական և կազմակերպական գործունեության, ինչպես նաև մարդկային և ֆինանսական ռեսուրսների կառավարման ինքնավարություն:

Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատություններն **օրենքով սահմանված շրջանակներում** ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը: Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին: Սահմանադրության մեկնաբանվող դրույթը սահմանում է Սահմանադրության գերակայություն օրենքների և այլ

իրավական ակտերի նկատմամբ, և օրենքների գերակայությունը՝ այլ նորմատիվ և անհատական ակտերի նկատմամբ⁵⁹:

Այսպիսով, Օրենքի 6-րդ հոդվածում ամրագրված կարգավորումից ստացվում է, որ բուհերի ակադեմիական և կազմակերպական գործունեության, ինչպես նաև մարդկային և ֆինանսական ռեսուրսների կառավարման ինքնավարությունը կարող է սահմանվել ոչ միայն օրենքով, այլ նաև այլ նորմատիվ իրավական ակտերով: Մինչդեռ, Սահմանադրությունը հստակ ամրագրում է պահանջ, ըստ որի՝ բարձրագույն ուսումնական հաստատություններն ինքնակառավարման իրավունք ունեն **օրենքով** սահմանված շրջանակներում:

Ուստի, բուհի ակադեմիական և կազմակերպական գործունեության, ինչպես նաև մարդկային և ֆինանսական ռեսուրսների կառավարման ինքնավարությունն այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանելու հնարավորության նախատեսելը ևս առաջ է բերում բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի լիարժեք ապահովման և երաշխավորման հարց:

Այսպիսով, բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության միջազգային և ներպետական չափանիշների դիտարկմամբ առաջ քաշված մտահոգությունները հիմք են տալիս եզրահանգելու, որ վիճարկման առարկա դարձած Օրենքի կարգավորումները չեն ապահովում բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը՝ որպես Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված կրթության իրավունքի իրացման նախադրյալ:

Սույն գործով Սահմանադրական դատարանը 2021 թվականի օգոստոսի 2-ին կայացրել է թիվ ՍԴՌ-1608 որոշումը⁶⁰, որով Բարձր դատարանում վիճարկվող օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը ճանաչել է Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող:

⁵⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Երևան, «Իրավունք», 2010: Հասանելի է <https://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf> հղումով:

⁶⁰ Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1608.pdf> հղումով:

6. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 148-րդ հոդվածի 6-րդ մասով, 2021 թվականի հուլիսի 12-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի՝ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին և 75-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

Դիմումում Օրենսգրքի 26-րդ գլխի սահմանադրականության հարցը բարձրացվել է այնքանով, որքանով առկա օրենսդրական բացը չի ապահովում Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի պատշաճ իրացումը, քանի որ Օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված կարգավորումները հնարավորություն չեն նախատեսում նույն գլխի կանոններով պատշաճ սահմանված դատավարական նորմերի կիրառմամբ քննության առարկա դարձնել նորմատիվ իրավական ակտի (կամ դրա դրույթի) իրավաչափության հարցը՝ դրա ընդունման համար հիմք հանդիսացած ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցած, սակայն ուժը կորցրած (գործողությունը դադարած) նորմատիվ իրավական ակտին (կամ դրա դրույթին) համապատասխանության տեսանկյունից:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Օրենսգրքի 26-րդ գլխի վերաբերում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթին: Օրենսգրքի 191-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ իրավական ակտերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի՝ *դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող* նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

Օրենսգրքի 192-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարելի է դիմել նաև այն դեպքում, երբ

*նորմատիվ իրավական ակտը դիմելու պահին այլևս իրավաբանական ուժ չուներ, սակայն կիրառվել է դիմողի նկատմամբ որևէ անհատական, ներառյալ՝ դատական ակտով: Օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն դեպքում, երբ վիճարկվում է որևէ նորմատիվ իրավական ակտի համապատասխանությունը դիմումում նշված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին, ապա վարչական դատարանը դատական ակտ կայացնելիս պարզում է *վիճարկվող ակտի համապատասխանությունը նաև դիմումում նշված այլ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին*, եթե դա վերապահված չէ սահմանադրական դատարանի իրավասությանը:*

Օրենսգրքի ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ Օրենսգրքով ամրագրված չեն ընթացակարգային նորմեր նորմատիվ իրավական ակտի իրավաչափության հարցը պարզելու համար այն դեպքերում, երբ վիճարկվում է նորմատիվ իրավական ակտը դրա համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցած այն ակտի հետ համապատասխանության տեսանկյունից, որն արդեն ուժը կորցրել է: Տվյալ դեպքում Մարդու իրավունքների պաշտպանը հարցը դիտարկել է յուրաքանչյուրի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման պատշաճ երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Սահմանադրական դատարանը 2020 թվականի հունիսի 18-ի թիվ ՍԴՈ-1546 որոշմամբ առանձնացրել է դատական պաշտպանության հիմնական իրավունքը՝ որպես օրենսդրի կողմից ուղղակիորեն (առանց կոլիզիոն սահմանադրական իրավունքով լեգիտիմացման) *սահմանափակման ոչ ենթակա հիմնական իրավունք:*

Իր որոշումներում Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է արդար դատաքննության և դատարանի մատչելիության իրավունքներին՝ ձևավորելով հստակ դիրքորոշում առ այն, որ **որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարանի դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը**, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: **Ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում⁶¹:**

Այս պարագայում սկզբունքային է պարզել, թե որքանով են Օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված կարգավորումները բավարար՝ յուրաքանչյուրի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման պատշաճ երաշխիքների ապահովման տեսանկյունից:

⁶¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ ՍԴՈ-1127, 2015 թվականի հունիսի 16-ի թիվ ՍԴՈ-1222, 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՍԴՈ-1257, 2016 թվականի մարտի 18-ի թիվ ՍԴՈ-1315 որոշումները և այլն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի գործնական և արդյունավետ⁶²: Որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է հստակ և գործնական հնարավորություն ունենա վիճարկելու այն ակտը, որով միջամտություն է կատարվել իր իրավունքներին⁶³: Դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է, երբ նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և այդպիսով խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննության⁶⁴: **Պետք է համոզվել, որ կիրառվող սահմանափակումները չեն սահմանափակում կամ նվազեցնում դատարանի մատչելիությունն այն աստիճան, որ խախտվի իրավունքի բուն էությունը**⁶⁵:

Դատական պաշտպանության իրավունքի հետ սերտորեն փոխկապակցված է նաև անձի հիմնական իրավունք համարվող՝ արդար դատաքննության իրավունքը, որն իր ամրագրումն է ստացել Սահմանադրության 63-րդ հոդվածում: Վերջինիս 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի օրենքի գերակայության լույսի ներքո, որով պահանջվում է, որ դատավարության մասնակիցներն ունենան **դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ (...)**⁶⁶:

⁶² Տե՛ս Բելլեթան ընդդեմ Ֆրանսիայի (Bellet v. France) գործով 1995 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 23805/94, կետ 38:

⁶³ Տե՛ս Քանյետե դե Գոնին ընդդեմ Իսպանիայի (Cañete de Goñi v. Spain) գործով 2003 թվականի հունվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 55782/00, կետ 34: Բելլեթան ընդդեմ Ֆրանսիայի (Bellet v. France) գործով 1995 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 23805/94, կետ 38: Բենեֆիցիո Կապպելլա Պաոլինին ընդդեմ Սան Մարինոյի (Beneficio Cappella Paolini v. San Marino) գործով 2004 թվականի հոկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 40786/98, կետ 28: Նունես Դիասն ընդդեմ Պորտուգալիայի (Nune Dias v. Portugal) գործով Եվրոպական դատարանի որոշումը, հասանելի է <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-23730> հղումով և այլն:

⁶⁴ Տե՛ս Դումիտրու Գեորգեսն ընդդեմ Ռումինիայի (Dumitru Gheorge v. Romania) գործով 2016 թվականի սեպտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 33883/06, կետ 28: Էֆստատիուն և Ուրիշներն ընդդեմ Հունաստանի (Efsthathiou and Others v. Greece) գործով 2006 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 36998/02, կետ 24:

⁶⁵ Տե՛ս Սիակովսկան ընդդեմ Լեհաստանի (Siatkowska v. Poland) գործով 2007 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 8932/05, կետ 102:

⁶⁶ Տե՛ս Բելեշը և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Běleš v. The Czech Republic) 2003 թվականի փետրվարի 12-ի վճիռը, գանգատ թիվ 47273/99, կետ 49:

Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների հետ կապված ցանկացած պահանջ դատարանում կամ տրիբունալում ներկայացնելու իրավունք: Արդարադատության մատչելիության իրավունքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների անբաժանելի մասն է⁶⁷:

Փաստորեն, Օրենսգրքում համապատասխան ընթացակարգային նորմերի բացակայության պայմաններում անձինք փաստացի հնարավորություն չունեն նորմատիվ իրավական ակտի՝ դրա համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող և արդեն ուժը կորցրած ակտին համապատասխանությունը վիճարկելու պահանջով դիմելու Վարչական դատարան: Այնուամենայնիվ, անհրաժեշտ ընթացակարգային նորմերի բացակայության պայմաններում նման պահանջ բովանդակող հայցադիմում Վարչական դատարան ներկայացնելու դեպքում առկա օրենսդրական կարգավորումների պայմաններում հստակ չէ, թե Օրենսգրքի որ նորմերով պետք է առաջնորդվի Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու և դրանից բխող դատավարական մյուս ընթացակարգերի կազմակերպման հարցը լուծելիս:

Օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված գործերի վարույթի շրջանակներում Վարչական դատարանում քննարկման և ուսումնասիրության առարկա են դառնում նորմատիվ իրավական երկու խումբ ակտեր, որոնք պետք է հստակ տարանջատել միմյանցից: Այսպես, 1-ին խումբը կազմում են նորմատիվ իրավական այն ակտերը, որոնց իրավաչափությունն է հենց վիճարկվում Դատարանում: 2-րդ խմբի մեջ մտնում են այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք վիճարկվող նորմատիվ ակտերի համեմատ ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ:

Նորմատիվ իրավական ակտի իրավաչափության վիճարկման հարց կարող է առաջանալ, երբ իրավահարաբերության ծագման պահին գործող և կիրառված դրույթը հետագայում ուժը կորցնում է, բայց այդ իրավահարաբերությունների շարունակականության պայմաններում ուժը կորցրած դրույթը դեռևս շարունակում է գործել և կիրառվել (օրինակ՝ երբ նորմը փոփոխվում է անձի իրավական վիճակը վատթարացնող նորմով, որը հետագարձ ուժ չունի, ինչով պայմանավորված էլ անձի նկատմամբ կիրառվում են արդեն ուժը կորցրած և գործող կարգավորումների համեմատությամբ բարենպաստ նորմերը):

Պետք է, սակայն, նկատի ունենալ, որ Օրենսգիրքը կարգավորումներ է բովանդակում միայն այն դեպքերի համար, երբ Դատարան դիմելու պահին իրավաբանական ուժ չունի 1-ին խումբը կազմող նորմատիվ իրավական ակտը, իսկ երբ արդեն ուժը կորցրել է վիճարկվող նորմատիվ իրավական ակտի համեմատությամբ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող

⁶⁷ Տե՛ս Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության (Golder v. United Kingdom) գործով 1975 թվականի փետրվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 4451/70, կետ 36:

նորմատիվ իրավական ակտը, ապա նման գործերի քննության որևէ առանձնահատկություն օրենսդիրը չի նախատեսել:

Այս համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանը խնդիրը դիտարկել է նաև Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված կարգավորման լույսի ներքո՝ եզրահանգելով, որ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի իրացման համար անհրաժեշտ կառուցակարգերի բացակայությունը (օրենսդրական բաց) խնդիրներ է առաջացնում ոչ միայն անձանց համար՝ իրենց նկատմամբ կիրառման ենթակա նորմերի կանխատեսելիության առումով, այլև համապատասխան կարգավորումները կիրառող մարմնի համար, և որ ամենակարևորն է՝ վերջինս, անկասկած, կարող է հանգեցնել մարդու մի շարք հիմնարար իրավունքների իրացման անհնարինության և խախտումների:

Սահմանադրական դատարանն իր 2014 թվականի ապրիլի 8-ի թիվ ՍԴՈ-1143 որոշմամբ նշել է, որ օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը: 2010 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-914 որոշմամբ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ **առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:**

*Այսպիսով, Սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Սահմանադրական դատարանում քննարկման առարկա դարձած խնդիրը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ Օրենսգրքով առհասարակ չեն սահմանվել ընթացակարգային նորմեր այն դեպքերի համար, երբ Վարչական դատարանում վիճարկվում է նորմատիվ իրավական ակտը դրա համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցած այն ակտի հետ համապատասխանության տեսանկյունից, որն արդեն ուժը կորցրել է: **Առկա օրենսդրական բացի պայմաններում սահմանափակվում է յուրաքանչյուրի՝ դատական պաշտպանության՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքը:***

Ասվածի գործնական հավաստումն է ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում քննվող գործի նախապարմությունը, համաձայն որի՝ վիճարկվում է ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի «Ռազմաուսումնական հաստատություններ ավարտած զինծառայողների կողմից հեղուսումնական պայմանագրային զինվորական

ծառայությունից հրաժարվելու դեպքում ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» թիվ 393-Ն որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետի վերջին պարբերության համապատասխանությունն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող (և արդեն ուժը կորցրած)՝ 2010 թվականի ապրիլի 8-ին գործող խմբագրությամբ «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին, 51-րդ հոդվածի 1-ին մասին և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածին: Վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում համապատասխան կարգավորումների բացակայության պայմաններում, փաստորեն, սահմանափակվել է անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ Օրենսգրքի 26-րդ գլուխը հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 75-րդ հոդվածներին այնքանով, որքանով Օրենսգրքով չեն սահմանվել ընթացակարգային նորմեր նորմատիվ իրավական ակտի իրավաչափության հարցը պարզելու համար այն դեպքերում, երբ վիճարկվում է նորմատիվ իրավական ակտը դրա համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցած այն ակտի հետ համապատասխանության տեսանկյունից, որն արդեն ուժը կորցրել է:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ՍԴԱՈ-254 որոշմամբ նշված գործի վարույթը կարճվել է⁶⁸:

7. ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

ՀՀ նախագահը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ և 68-րդ հոդվածների 1-ին մասերով, 2021 թվականի մարտի 10-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասին, 57-րդ հոդվածի 2-րդ մասին, 79-րդ հոդվածին և 155-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

Դիմումում Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության հարցը բարձրացվել է այն առումով, որ Օրենքի 40-րդ հոդվածի հաշվառմամբ՝ բարձրագույն իրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը կարող է իրականացվել

⁶⁸ Որոշումը հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/working/2021/pdf/sdav-254.pdf> հղումով:

սուկ քաղաքական հայեցողությամբ՝ առանց պաշտոնից ազատման՝ Օրենքով սահմանված դեպքերի (հիմքերի) առկայության:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական պաշտոնի նշանակվում է՝ հաշվի առնելով զինծառայողի համապատասխանությունը տվյալ պաշտոնին, մասնագիտական ու ծառայողական ունակությունները, հոգեբանական որակները, առողջական վիճակը և սույն օրենքով նախատեսված այլ պայմաններ: Պայմանագրային զինծառայողը նշանակվում է իր հիմնական կամ հարակից զինվորական մասնագիտությանը համապատասխանող զինվորական պաշտոնի՝ հաշվի առնելով ծառայողական գործունեության փորձը: Պայմանագրային զինծառայողի՝ նոր մասնագիտական զինվորական պաշտոնի նշանակմանը պետք է նախորդի համապատասխան վերապատրաստումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բարձրագույն հրամանատարական խմբի զինվորական պաշտոնի կարող է նշանակվել այն պայմանագրային զինծառայողը, որը մինչև նշանակումն առնվազն երեք տարի ժամկետով զբաղեցրել է զինված ուժերի կամ այլ զորքերի ավագ հրամանատարական խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր զինվորական կոչում կամ մինչև նշանակումն այլ պետական մարմիններում առնվազն երեք տարի զբաղեցրել է զինված ուժերի ավագ հրամանատարական կամ բարձրագույն սպայական խմբերի պաշտոններին համապատասխանող պաշտոն և ունի զինված ուժերի գնդապետից ոչ ցածր համապատասխան հատուկ կոչում (դասային աստիճան):

Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատումն իրականացվում է նույն օրենքի 35.1-ին հոդվածով բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնի նշանակելու համար սահմանված կարգով: Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը կարող է իրականացվել անկախ այն հանգամանքից՝ առկա են նույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքեր, թե ոչ: Հոդվածի 1-ին մասով սահմանված են պայմանագրային զինծառայող՝ զինվորական պաշտոնից ազատման 11 հստակ հիմք:

Հարկ է նկատել, որ մինչ բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատման վերաբերյալ վերը նշված կարգավորման ամրագրումը փաստացի և իրավական առումով առկա էր մի իրավիճակ, երբ պայմանագրային զինծառայողը, այդ թվում նաև բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողի զինվորական պաշտոնից ազատման հիմքերը որոշակի էին, ինչն իրավացիորեն հնարավորություն էր տալիս զինծառայողին համապատասխանաբար պայմանավորել իր վարքագիծը, ինչպես

նաև հստակորեն իմանալ այդ ծառայությունից ազատման բոլոր հիմքերը: Նշվածի կարևորությունն ընդգծվում է նաև պայմանագրային զինծառայողների իրավունքների պաշտպանության և իրավունքների խախտման կանխարգելման տեսանկյունից:

Մինչդեռ, վիճարկվող կարգավորման պայմաններում ստացվում է այնպես, որ պետությունը տարիներ շարունակ բարձրագույն հրամանատարական խմբի զինվորական պաշտոնների համար պատրաստում է կադրեր, օգնում նրանց ձեռք բերել անհրաժեշտ փորձ, հմտություններ, հոգեբանական որակներ և այլ հատկանիշներ, նրանց նշանակում է նշված պաշտոններին՝ միևնույն ժամանակ նախատեսելով առանց որոշակի հիմքերի վերջիններիս զինվորական ծառայությունից ազատելու հնարավորություն ընձեռող օրենսդրական կարգավորում: Այդ կերպ, զինված ուժերը կարող են կորցնել բարձր որակավորում ունեցող բանիմաց կադրեր, որոնց փոխարինման հարցում պրակտիկայում կարող են առաջանալ դժվարություններ:

Այլ է խնդիրը, եթե բարձրագույն հրամանատարական խմբի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողները ծառայությունից ազատվեն օրենքով նախատեսված հիմքերով (օրինակ՝ զինծառայողի կատարած զանցանքի կապակցությամբ «զինվորական ծառայությունից արձակում» կարգապահական տույժ կիրառելու կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրկման դատապարտվելու հիման վրա պատիժ կրելու դեպքերում): Պայմանագրային զինծառայողներին ծառայությունից արձակելու սպառիչ հիմքերի նախատեսումն ինքնանպատակ չէ. դրանք հանդիսանում են յուրատեսակ «անվտանգության բարձիկներ»՝ բացառելու զինծառայողներին ծառայությունից արձակելու անհիմն դեպքերը և չարաշահումները:

Մինչդեռ, բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատման օրենքով սահմանված հիմքերի բացակայությունն առաջ է բերում Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «օրենքով սահմանված դեպքերի և կարգի» որոշակիության հարց: Բանն այն է, որ օրենքով սահմանված դեպքերը բովանդակային առումով պետք է լինեն որոշակի և անգամ հայեցողական տարրերի առկայության պարագայում կանխատեսելի լինեն այն անձանց շրջանակի համար, ում վրա այն տարածվում է:

Ուստի, նշվածի հաշվառմամբ՝ Բարձր դատարանում վիճարկվող դրույթը դիտարկվել է իրավական որոշակիության սկզբունքի, աշխատանքի ընտրության ազատության ու աշխատանքային իրավունքների, հանրային ծառայության անցնելու իրավունքի, ինչպես նաև խտրականության արգելքի համատեքստում:

Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանվում է, որ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ

իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ իրավական որոշակիության սկզբունքը համարվում է օրենքի գերակայության հիմնական տարրերից մեկը⁶⁹: Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Նշվածով հանդերձ, սակայն, Եվրոպական դատարանը միաժամանակ նշել է, որ այդ հետևանքները կարիք չունեն կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ. փորձը ցույց է տալիս, որ դա անհասանելի է⁷⁰:

ՀՀ Սահմանադրական դատարանի նախադեպային պրակտիկան ևս բացահայտել է իրավական որոշակիության սկզբունքի իրավական բովանդակությունը՝ մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորման միջազգային մոտեցումներին համահունչ⁷¹: Այսպես, Սահմանադրական դատարանի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ ՍԴՈ-1213 որոշմամբ արձանագրված դիրքորոշման համաձայն՝ իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Հաշվի առնելով, որ զինվորական ծառայությունը, ըստ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, հանրային ծառայություն է՝ քննարկվող հարցը պետք է դիտարկել նաև աշխատանքային իրավահարաբերությունների և հանրային ծառայողի երաշխիքների տեսանկյունից:

Ըստ այդմ, Մարդու իրավունքների պաշտպանի գնահատմամբ՝ վիճարկվող դրույթի սահմանադրականությունը պետք է քննարկվի նաև Սահմանադրության 49-րդ (Հանրային ծառայության անցնելու իրավունքը) և 57-րդ (Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները) հոդվածների լույսի ներքո:

⁶⁹ Տե՛ս Բեիանն ընդդեմ Ռումինիայի (Beian v. Romania (No. 1)) գործով 2008 թվականի մարտի 6-ի վճիռը, գանգատ թիվ 30658/05, կետ 39: Բառանովսկին ընդդեմ Լեհաստանի (Baranowski v. Poland) գործով 2000 թվականի մարտի 28-ի վճիռը, գանգատ թիվ 28358/95, կետ 56:

⁷⁰ Տե՛ս Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Busuioc v. Moldova) գործով 2005 թվականի մարտի 21-ի վճիռը, գանգատ թիվ 61513/00, կետ 52: Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի (Rekvenyi v. Hungary) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 25390/94, կետ 34:

⁷¹ Սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՍԴՈ-753 որոշումը, ՍԴՈ-630, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1289 որոշումները, 2015 թվականի հունիսի 9-ի թիվ ՍԴՈ-1213 որոշումը, 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ՍԴՈ-1176 որոշումը:

Այսպես, Սահմանադրական դատարանը ՍԴՌ-1507 և ՍԴՌ-1449 որոշումներում նշել է, որ **հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ծավալի մեջ ներառվում է նաև անձի կողմից ընդհանուր հիմունքներով զբաղեցված հանրային պաշտոնում պաշտոնավարելու իրավունքը, որը, իր հերթին, ենթադրում է օրենքով չնախատեսված, ինչպես նաև կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատվելու արգելք:**

Կամայական հիմքերով աշխատանքից ազատման երաշխիքը ներառվում է նաև աշխատանքային իրավունքների շրջանակում այն առումով, որ Սահմանադրության 57-րդ հոդվածն, ի թիվս այլնի, ամրագրում է **յուրաքանչյուր աշխատողի՝ աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունքը:** Սահմանադրական դատարանը ՍԴՌ-902 որոշմամբ ընդգծել է, որ աշխատանքի ընտրության ազատությունը ներառում է, ի թիվս այլնի, աշխատանք փնտրելու իրավունքը, որի մեկնաբանությունից բխում է նաև **արդեն ձեռք բերած աշխատանքից կամայականորեն չզրկվելու իրավունքը:**

Ավելին, Սահմանադրական դատարանը մեկ այլ՝ ՍԴՌ-792 որոշմամբ արձանագրել է, որ աշխատանքով պայմանավորված հարաբերությունների կարգավորման պայմանագրային բնույթը միաժամանակ պահանջում է ոչ միայն իրավունքի իրացման, այլև պարտականության կատարման անհրաժեշտություն, և կողմերի, տվյալ դեպքում **գործատուի՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավունքի իրացումը չպետք է պայմանավորված լինի նպատակահարմարությամբ կամ սուբյեկտիվ բնույթի այլ գործոնով, այլ հետապնդի արդար, իրավաբանորեն ամրագրված որոշակի նպատակ՝ աշխատանքի իրավունքի իրացման սահմանադրորեն կանխորոշված սկզբունքներին համապատասխան:**

Ավելին, վերը նշված սահմանադրական երաշխիքներից զատ իրավական հարցադրման տեղիք է տալիս, թե օրենսդրի այս տարբերակված մոտեցումը՝ բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատման հիմքեր չնախատեսելու առումով, արդյոք ունի օբյեկտիվ և արդարացված հիմք: Այս առումով, Սահմանադրական դատարանն իր ՍԴՌ-991 որոշմամբ անդրադարձել է աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս անձանց իրավական տարբեր կարգավիճակներ սահմանելու հարցին՝ կապված աշխատանքային պայմանների, անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, ընդգծելով առանձին պաշտոններ զբաղեցնելու և պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքերի հնարավորության, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են և ունեն սահմանադրաիրավական համապատասխան հիմնավորում:

Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է զինվորական ծառայությանը, և ծառայության առանձնահատկություններով պայմանավորված՝ որոշակի հատուկ կարգավորումների սահմանումն ինքնին խնդրահարույց չէ: Մինչդեռ, նման տարբերակումը պետք է համահունչ լինի Սահմանադրությամբ ամրագրված՝ որոշակիության և խտրականության արգելքի

սկզբունքներին, չխաթարի մարդու՝ հանրային ծառայության անցնելու և աշխատանքային իրավունքները:

Այսպիսով, Սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, կոնվենցիոն կարգավորումների համադրմամբ դիտարկելով Սահմանադրական դատարանում քննարկման առարկա խնդիրը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը խնդրահարույց է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ իրավական որոշակիության, աշխատանքի ընտրության ազատության ու աշխատանքային իրավունքների, հանրային ծառայության անցնելու իրավունքի, ինչպես նաև խտրականության արգելքի տեսանկյունից:

Նշված գործով Սահմանադրական դատարանը 2021 թվականի նոյեմբերի 2-ին կայացրել է թիվ ՍԴՈ-1616 որոշումը, որով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող⁷²:

8. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի, 135-րդ հոդվածի 2-րդ մասի, 202-րդ հոդվածի 1-ին մասի, 259-րդ հոդվածի 2-րդ մասի, 394-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 75-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածով 1-ին մասի 8-րդ կետով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով, 2020 թվականի հոկտեմբերի 22-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի, 135-րդ հոդվածի 2-րդ մասի, 202-րդ հոդվածի 1-ին մասի, 259-րդ հոդվածի 2-րդ մասի, 394-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 75-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

⁷² Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1616.pdf> հղումով:

Սահմանադրական դատարանում քննարկման առարկա դարձած դիմումի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունն անդրադարձ է կատարում դիմումով բարձրացված այն հարցերին, որոնք, թեև դիմողը բարձրացրել է կոնկրետ գործի շրջանակներում կիրառությամբ պայմանավորված, սակայն, բնույթով համակարգային են և կարող են առաջ բերել ընդհանուր առմամբ ոչ իրավաչափ իրավակիրառում: Դրանք, մասնավորապես, վերաբերում են, կալանքի կիրառության շրջանակներում «հիմնավոր կասկածի» չափանիշին, ինչպես նաև «քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու» վտանգի գնահատմանը և ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում «պաշտոնատար անձ» եզրույթի հասկացությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության և ներպետական նախադեպային իրավունքի լույսի ներքո:

«Հիմնավոր կասկածի» չափանիշը և ապացույցների բավարար համակցության խնդիրը

Դիմումով քննարկման առարկա է դարձել այն հարցը, թե «հիմնավոր կասկածի» շեմը՝ որպես անձի կալանավորման անհրաժեշտ պայման, արդյոք կարող է բավարարված համարվել մեկ ապացույցի հիման վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա *հիմնավոր կասկած*, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը, քննարկելով կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման անհրաժեշտությանը, դիրքորոշում⁷³ է արտահայտել առ այն, որ դրանք ապահովված կլինեն միայն այն դեպքում, երբ հաստատվի *անձի առնչությունն իրեն մեղսագրվող հանցագործությանը, այն է՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը*: Նույն որոշմամբ՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ կալանքը՝ որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պետք է անդրադառնա, ի թիվս այլնի՝ կալանավորման պայմանների, այդ թվում՝ հիմնավոր կասկածի առկայությանը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավոր կասկած առ այն, որ նա իրավախախտում է կատարել, ընդ որում՝ յուրաքանչյուր դեպքում կասկածը պետք է լինի ողջամիտ: Նշվածը Վճռաբեկ դատարանը հիմնավորել է Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ հաստատված այն դիրքորոշմամբ⁷⁴, որ կալանքի հիմնավորվածության կարևոր տարրերից են կասկածների արժանահավատությունն ու բարեխղճությունը⁷⁵:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ «հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է, այլ գտել է, որ **կասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում**, ընդ որում՝ անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: Այլ կերպ՝ ըստ Վճռաբեկ դատարանի՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, **կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը**, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին⁷⁶:

⁷³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0678/06/10 գործով 2011 թվականի փետրվարի 24-ի որոշումը

⁷⁴ Տե՛ս Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (MURRAY v. THE UNITED KINGDOM) 1994թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 14310/88, կետ 61

⁷⁵ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0678/06/10 գործով 2011 թվականի փետրվարի 24-ի որոշումը

⁷⁶ Տե՛ս նույն տեղում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն եկել է այն եզրահանգման, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված **ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ**: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված⁷⁷:

Կալանավորմանը ներկայացվող պարտադիր չափանիշները հաստատվել են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը այս առումով ընդգծել է, որ ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ կալանավորման ժամանակ հարցաքննության նպատակը քննության ընթացքի հետագա շարունակությունն է՝ կալանավորման հիմքում ընկած կասկածի հաստատման կամ հերքման նպատակով: Միևնույն ժամանակ, դատարանը նշել է, որ կասկած հարուցող փաստերը չպետք է բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է քրեական հետապնդման հաջորդ փուլում մեղադրանքը հիմնավորելու, կամ նույնիսկ մեղադրանք առաջադրելու համար⁷⁸:

Այնուամենայնիվ, կասկածի «հիմնավորվածությունը», որը պետք է դրվի կալանավորման հիմքում, ձևավորում է ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետում ամրագրված կամայական կալանավորման դեմ ուղղված երաշխիքի էական մասը: Այդ պատճառով ինքնին բավարար չէ այն փաստը, որ կասկածը հարուցվել է բարեխղճորեն: Փաստացի, «ողջամիտ կասկածի» բովանդակությունը դիտարկվում է երկու տարբեր, բայց միևնույն ժամանակ նաև որոշակիորեն համընկնող, փաստական և արարքի իրավական որակման տեսանկյունից⁷⁹:

«Ողջամիտ կասկածի» փաստական կողմի առնչությամբ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է, որ **«հիմնավոր կասկած» եզրույթը կասկածի հիմնավորման որոշակի չափանիշ է, ինչը ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որոնք բավարար կլինի անաչառ դիտորդին եզրակացնելու, որ քննարկվող անձը ենթադրաբար կատարել է**: Իսկ թե որ փաստը կարող է համարվել «հիմնավոր», կախված է գործի բոլոր հանգամանքներից. Դատարանը պետք է

⁷⁷ Տե՛ս նույն տեղում:

⁷⁸ Տե՛ս Սաբունցուն և այլք ընդդեմ Թուրքիայի (SABUNCU AND OTHERS v. TURKEY) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2020 թվականի նոյեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 23199/17, կետ 144:

⁷⁹ Տե՛ս նույն վճիռը, կետ 145:

հնարավորություն ունենա պարզել, թե արդյոք ապահովված են ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետում ամրագրված երաշխիքները: «Ողջամիտ կասկածի» փաստական կողմը գնահատելիս պետք է հաշվի առնվի, թե արդյոք ձերբակալումը կամ կալանքը հիմնվել է բավարար անկողմնակալ փաստերի արդյունքում առաջ եկած այն ողջամիտ կասկածի վրա, որ վիճարկվող փաստերն իրականում տեղի են ունեցել և վերագրելի են կասկածվող անձանց⁸⁰: Կասկածը չի կարող հիմնված լինել սոսկ այն հավաստիացման վրա, որ առկա է ստույգ, բայց և գաղտնի տեղեկություն⁸¹, ինչպես նաև որ անձի կալանավորման հիմքերի առկայությունը վկայող հիմնավորումները պետք է լինեն փաստարկված, այն է՝ հիմնված կոնկրետ փաստերի, ինչպես նաև անձը բնութագրող հատկանիշների վրա՝ ընդհանուր և վերացական բնույթից զերծ⁸²:

Այսպիսով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ներպետական դատական պրակտիկան վկայում է, որ «հիմնավոր կասկած» եզրույթի պատշաճ մեկնաբանության պարագայում պետք է բացառվի անձին ազատությունից զրկելու կամայականությունը: «Հիմնավոր կասկածի» չափանիշը բավարարված կարող է լինել միայն այդ կասկածն արդարացնող բավարար փաստերի, տեղեկությունների և ապացույցների առկայության պարագայում. «հիմնավոր կասկածը» պետք է բխի դրա հիմքում դրված փաստական տվյալներից:

Իրավակիրառ պրակտիկայում «հիմնավոր կասկած» եզրույթի այնպիսի մեկնաբանությունը, որի պարագայում անձի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվում կալանավորումը առանց բավարար չափով հիմնավորելու վերջինիս առնչություն իրեն մեղսագրվող արարքին, կամայական է և հանգեցնում է կալանավորման հիմնավորվածության և օրինականության բացակայությանը: Կալանքի կիրառության շրջանակներում «հիմնավոր կասկածի» գնահատման հարցը դիտարկվել է նաև քրեադատավարական օրենքի՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու ապացուցողական շեմի բավարարության տեսանկյունից: Այսպես, օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը նրա կողմից *հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունն է*: Իսկ օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով կալանքը որպես խափանման միջոց կարող է կիրառվել

⁸⁰ Տե՛ս նույն վճիռը, կետ 146:

⁸¹ Տե՛ս Ֆոկսը, Քեմբելն ու Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (FOX, CAMPBELL AND HARTLEY v. THE UNITED KINGDOM) գործով 1990թ. օգոստոսի 30-ի վճիռը, գանգատներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, կետ 32:

⁸² Տե՛ս Ալեքսանյանն ընդդեմ Ռուսաստանի (Aleksanyan v. Russia), գանգատ թիվ 46468/06, 2008 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռ, կետ 179, Բոյչենկոն ընդդեմ Մոլդովայի (Boicenco v. Moldova) ,գանգատ թիվ, 41088/05, 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռ, կետ 142, Խուդոյրովն ընդդեմ Ռուսաստանի (Khoudoioren v. Russia) գանգատ թիվ 6847/02, 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռ, կետ 173, Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (Piruzyan v. Armenia), գանգատ թիվ 33376/07, 2012 թվականի հունիսի 26-ի վճիռ, կետ 92

մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձի նկատմամբ, այսինքն՝ ում կողմից *հանցանքի կատարումը վկայող ապացույցների բավարար համակցությունն* արդեն պետք է ապահովված լինի:

Ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ **անձի անձնական ազատության սահմանադրական իրավունքի երաշխավորման տեսանկյունից իրավաչափ կարող է համարվել միայն «հիմնավոր կասկածի» այն շեմը, որը հիմնված է ոչ թե մեկ ապացույցի, այլ ապացույցների բավարար համակցության վրա:**

«Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգի» գնահատումը

Կալանքի կիրառությանն առնչվող մեկ այլ խնդիր է «քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգը հավաստող փաստական տվյալների գնահատումը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է թաքնվելու հավանականության գնահատմանը՝ հիմնվելով անձի՝ վարույթն իրականացնող մարմնի պահանջով չներկայանալու փաստի վրա. արդյոք ինքնին չներկայանալը կարող է դիտարկվել իբրև բավարար հիմք «թաքնվելու վտանգը» հավաստելու համար, թե այս դեպքում ևս կանոնն ապացույցների համակցության մեջ դիտարկումն է:

ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է կալանքի կիրառման հարցի լուծման շրջանակներում «թաքնվելու» հավանականության գնահատմանը՝ հատկապես մեղադրյալի՝ ՀՀ սահմաններից դուրս գտնվելու պայմաններում: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը Վալերի Հակոբյանի գործով թիվ ԵԴ/0548/06/19 որոշմամբ արձանագրել է որ. «ծանուցագիրը ստանալու փաստը հաստատող տվյալի բացակայության դեպքում ծանուցման պատշաճ լինելու հարցը լուծելիս անհրաժեշտ է բազմակողմանի վերլուծության ենթարկել այդ ուղղությամբ համապատասխան մարմինների կողմից ձեռնարկված գործողությունների քանակական և որակական կազմը, ծանուցվող անձի դրսևորած վարքագիծը, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք կարող են առանցքային նշանակություն ունենալ խնդրո առարկա հարցի լուծման համար:»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս, անդրադառնալով կալանավորման հարցը քննարկելու շրջանակներում փախուստի վտանգը գնահատելիս պետք է հաշվի առնել մի շարք գործոններ, որոնք կվերաբերեն տվյալ անձի կերպարին, բարոյականությանը, մշտական բնակության վայրին, մասնագիտությանը, ունեցվածքին, ընտանեկան և տարատեսակ այլ կապերին այն երկրի հետ, որում նա ենթարկվում է քրեական հետապնդման⁸³: Մշտական բնակության վայրի բացակայությունն ինքնին

⁸³ Տե՛ս Բեչինև ընդդեմ Մոլդովայի (Becciev v. Moldova) գործով 2006 թվականի հունվարի 4-ի վճիռը, գանգատ թիվ 9190/03, կետ 58:

փախուստի վտանգ չի առաջացնում⁸⁴: Ավելին, Եվրոպական դատարանը նաև նշել է, որ երբ կալանքը հիմնավորող միակ պատճառը մեղադրյալի փախուստի դիմելու և դատական քննությանը ներկայանալուց խուսափելու վախն է, ապա նախքան դատավարությունը նա պետք է ազատ արձակվի՝ հնարավորության դեպքում վերջինիս ներկայությունն ապահովելու երաշխիքներ ստանալով⁸⁵:

Ներկայացվածը վկայում է այն մասին, որ որպես խափանման միջոց կալանավորման հարցը քննարկելիս կալանավորման հիմքերի առկայության հարցը պարզելու առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը փախուստի վտանգի գնահատման չափանիշներ՝ որոշակի շեմ է սահմանել, ինչը նշանակում է, որ այդ վտանգը պետք է գնահատվի բավարար փաստական տվյալների հիման վրա, այդ տվյալների ամբողջության ու համակցության մեջ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունների առկայության գնահատման հարցի կապակցությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կալանավորման հիմք(եր)ի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն ոչ թե այդ փաստական տվյալները մեկը մյուսից անջատ, ինքնավար հետազոտման ենթարկելու, այլ դրանք իրենց համակցության մեջ գնահատման ենթարկելու արդյունքում ձևավորվող փաստարկված դատողությունների վրա⁸⁶:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ համապատասխան փաստական տվյալներն իրենց ամբողջության մեջ չվերլուծելը, դրանք իրարից անջատ գնահատելը կարող է հանգեցնել կալանավորման հիմքի առկայության կամ բացակայության մասին չհիմնավորված եզրահանգման գալուն: Հետևաբար, ըստ Վճռաբեկ դատարանի, մեղադրյալի հավանական գործողությունների վերաբերյալ հարցը լուծելիս դատարանի հետևությունները յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնված լինեն գործի նյութերում առկա ապացույցների, փաստերի կամ այլ տեղեկությունների, այդ թվում՝ քրեական օրենքով արգելված ենթադրյալ հանցանքի կատարման պահից ի վեր մեղադրյալի դրսևորած վարքագծի և նրա անձը բնութագրող այլ հատկանիշների՝ իրենց ամբողջության մեջ գնահատման վրա⁸⁷:

Դրա հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրահանգումը պետք է հիմնված լինի վերը նշված հանգամանքների

⁸⁴ Տե՛ս Սուլաոջան ընդդեմ Էստոնիայի (Sulaoja v. Estonia) գործով 2005 թվականի մայիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 55939/00, կետ 64:

⁸⁵ Մերաբիշվիլին ընդդեմ Վրաստանի (Merabishvili v. Georgia) գործով 2017 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 72508/13, կետ 223:

⁸⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0084/06/16 գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի որոշումը:

⁸⁷ Տե՛ս նույն տեղում:

փոխազդեցության, հարաբերակցության բացահայտման, այդ հանգամանքների համակցված գնահատման արդյունքում ձևավորված համոզմունքի վրա, ինչն իր հերթին պետք է արտացոլվի դատարանի կողմից կայացվող դատական ակտում⁸⁸:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշման ուսումնասիրությունից ևս պարզ է դառնում, որ կալանավորման՝ որպես խափանման միջոցի ընտրության հարցը քննարկելիս կալանավորման հիմքի (հիմքերի) առկայությունը հավաստող փաստական տվյալների գնահատումը պետք է արվի ոչ թե այդ տվյալների իրարից անկախ և անջատ եղանակով, այլ բոլոր փաստական տվյալների ամբողջության և համակցության մեջ: Ուստի, իրավակիրառ պրակտիկայում կալանավորման հիմքերի առկայության հարցը պարզելիս առկա փաստական տվյալների անջատ գնահատումը կարող է հանգեցնել փաստական տվյալների վերաբերյալ ոչ օբյեկտիվ գնահատականի, ինչն էլ հանգեցնի կալանավորման անհրաժեշտության վերաբերյալ ոչ պատշաճ հիմնավորվածության:

Այսպիսով, անդրադառնալով այն հարցին, թե կալանավորման հիմքերի հարցը քննարկելիս առկա փաստական տվյալները պետք է քննարկվեն միմյանցից անջատ, թե դրանց համակցության մեջ՝ պետք է նշել, որ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված ընդհանուր պահանջից զատ (<< քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից) դատական պրակտիկան ևս վկայում է, որ կալանավորման հիմքի (հիմքերի) առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունների հիմքում պետք է դրվեն գործում առկա փաստական տվյալների ամբողջական և համակցված գնահատման հիման վրա ձևավորված հետևությունները:

«Պաշտոնատար անձ» եզրույթի հասկացությունը << քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համարեքստում.

<< քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը) առաջացնում է քրեական պատասխանատվություն: Նույն

⁸⁸ Տե՛ս նույն տեղում:

հողվածի 3-րդ մասով սահմանվում է, որ պաշտոնատար անձինք են մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք, ինչպես նաև պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի հետ կապված քննարկման առարկա է դարձվել նույն հոդվածում առկա «պաշտոնատար անձի» որպես հանցագործության եզրույթի որոշակիության հարցը, ինչի շրջանակներում անդրադարձ է կատարվել «պաշտոնատար անձի» գործառույթային ասպեկտին՝ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

Այսպես, Վճռաբեկ դատարանի այն որոշումը⁸⁹, որում նկարագրվում են «պաշտոնատար անձ» եզրույթի բնութագրիչ հատկանիշները: Մասնավորապես, նույն որոշման մեջ Վճռաբեկ դատարանը արձանագրել է. «...իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնում են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոնավարող այն անձինք, ովքեր իրենցից ծառայական կախվածություն չունեցող, իրենց ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով օժտված են կարգադրիչ լիազորություններով:

Կազմակերպական-տնօրինչական գործառույթներ իրականացնող են համարվում այն պետական ծառայողները, ովքեր ղեկավարում են իրենց ենթակայության տակ գտնվող ծառայողների գործունեությունը: Այս առումով պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության հատուկ սուբյեկտ է հանդիսանում յուրաքանչյուր պետական ծառայող, ով իր ենթակայության տակ այլ ծառայողներ ունի, ղեկավարում է նրանց գործունեությունը:

Վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պետական ծառայողներն այն անձինք են, ովքեր օժտված են գույքի, նյութական արժեքների տնօրինման, կառավարման լիազորություններով, մասնավորապես, գույքի, նյութական արժեքների պահպանության, վերամշակման, նյութական արժեքների իրացման նկատմամբ հսկողության սահմանման, դրամական միջոցների ստացման, հանձնման և այլ գործառույթներով:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ դիտելու համար էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե արդյոք

⁸⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2013 թվական հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0207/01/12 քրեական գործով կայացված որոշումը:

նրանք օժտված են իրավական նշանակություն ունեցող, իրավահարաբերություններ առաջացնող, դադարեցնող կամ փոփոխող գործողություններ կատարելու լիազորությամբ: Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ է այն պետական ծառայողը, ով իրավունք ունի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության անունից պաշտոնական փաստաթուղթ տրամադրել քաղաքացիներին և դրանով կարգավորել նրանց վարքագիծը:

Ջուտ մասնագիտական գործառույթներ իրականացնող՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողները պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ չեն հանդիսանում: Սակայն, եթե նշված անձինք օժտված են նաև կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական լիազորություններով, ապա, այդ լիազորություններն իրականացնելիս հանդիսանում են պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ:»

Ասվածի հաշվառմամբ՝ նախադեպային իրավունքից բխում է, որ խնդրո առարկա հանցակազմերի շրջանակներում պաշտոնատար անձ հասկացությունը պետք է մեկնաբանվի և կիրառվի գործառույթային այն շրջանակներում, որոնք կանխորոշվել են Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշմամբ: Պաշտոնատար անձի տարածական մեկնաբանությունը կարող է հանգեցնել քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի շրջանակներից դուրս՝ ոչ իրավաչափ իրավակիրառման:

Նշված գործով Սահմանադրական դատարանը 2021 թվականի ապրիլի 16-ին կայացրել է թիվ ՍԴԱՌ-79 որոշումը, որով գործի վարույթը կարճել է⁹⁰:

9. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածով 1-ին մասի 8-րդ կետով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով, դիմել է ՀՀ սահմանադրական դատարան «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

Դիմողը ներկայացրել է պնդում առ այն, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածը հակասում է Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև 63-րդ հոդվածի 1-ին մասին այնքանով, որքանով սնանկության գործը քննող դատարանին չի վերապահում սնանկության գործի վարույթն ամբողջությամբ կամ պարտապանի նկատմամբ գրանցված որևէ պահանջի

⁹⁰ Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/working/2021/pdf/sdav-79.pdf> հղումով:

մասով (կատարմանն ուղղված գործողությունները ներառյալ) կասեցնելու լիազորություն այն պարագայում, երբ սնանկության գործի հետագա ընթացքն ամբողջությամբ կամ մասամբ անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

«Սնանկության մասին» օրենքի 20.1-րդ հոդվածով նախատեսվում է, որ սնանկության գործի վարույթը առանձին պարտատերերի պահանջների մասով կարող է կասեցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ կասեցման հիմքերի առկայության դեպքում, եթե այդ իրավակարգավորումները կիրառելի են սնանկության վարույթում առանձին պահանջների քննության նկատմամբ:

Դիմողի ներկայացրած սնանկության գործի փաստական հանգամանքներից կարելի է եզրակացնել, որ փաստորեն, ստացվում է, որ «Սնանկության մասին» օրենքով՝ 20.1-րդ հոդվածով հնարավոր է միայն առանձին պահանջների քննության կասեցումը, իսկ սնանկության վարույթի կասեցումը, թեկուզև առանձին պահանջի մասով կասեցումը՝ արդեն իսկ հաստատված պահանջի բավարարմանն ուղղված գործողությունների մասով նույն օրենքով հնարավոր չէ նույնիսկ այն դեպքում, երբ համապատասխան պահանջի, այն է՝ հանրային իրավական դրամական պահանջի հիմք հանդիսացող վարչական ակտը բողոքարկվում է վարչական դատարանում:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությամբ անդրադարձ է կատարվում դիմումով բարձրացված հարցին, այն է՝ «Սնանկության մասին» օրենքի 20.1-րդ հոդվածում սնանկության գործը քննող դատարանի կողմից սնանկության գործի վարույթն ամբողջությամբ կամ պարտապանի նկատմամբ գրանցված որևէ պահանջի մասով (կատարմանն ուղղված գործողությունները ներառյալ) կասեցնելու հնարավորության ամրագրված չլինելուն՝ հաշվի առնելով դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների պաշտպանության ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պահանջները, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի, արդար դատաքննության բաղադրատարր դատարանի մատչելիության իրավունքների երաշխավորվածությունը նաև վերջիններիս վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համատեքստում:

Այսպես, Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր

որ ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով արդար դատաքննության և դատարանի մատչելիության իրավունքներին, իր ՍԴՈ-1315 որոշմամբ արձանագրել է, որ *որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարանի դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ*⁹¹:

Միևնույն ժամանակ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ տրիբունալի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային լուսմների իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը վկայում է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի օրենքի գերակայության լույսի ներքո, որով պահանջվում է, որ դատավարության մասնակիցներն ունենան *դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որոնք նրանց թույլ կտան պաշտպանել իրենց քաղաքացիական իրավունքները*⁹²:

Նույն դրույթի շրջանակներում նախադեպային իրավունքը փաստում է, որ դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի «գործնական և արդյունավետ»⁹³: Որպեսզի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անհատը պետք է «ունենա հստակ, գործնական հնարավորություն՝ վիճարկելու այն ակտը, որով միջամտություն է կատարվում իր իրավունքներին»⁹⁴:

Դրա հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել առ այն, որ *դատարանի իրավունքը չի սահմանափակվում վարույթի հարուցմամբ,*

⁹¹ Սահմանադրական դատարանի սույն դիրքորոշումը տեղ է գտել նաև դատարանի մի շարք այլ որոշումներում. Տե՛ս Սահմանադրական դատարանի 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՍԴՈ-1257, 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ ՍԴՈ-1127, 2015 թվականի փետրվարի 10-ի թիվ ՍԴՈ-1190 և 2015 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԴՈ-1222 որոշումները:

⁹² Տե՛ս Բելեսը և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Béleš and Others v. the Czech Republic) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը, գանգատ թիվ 47273/99, կետ 49:

⁹³ Տե՛ս Բելլեթն ընդդեմ Ֆրանսիայի (Bellet v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը, գանգատ թիվ 23805/94, կետ 38:

⁹⁴ Տե՛ս նույն տեղում, կետ 36:

ավելին այն ներառում է ոչ միայն վարույթ հարուցելու իրավունքը, այլև դատարանի կողմից վեճի լուծում ստանալու իրավունքը: Մասնավորապես, Դատարանի արձանագրմամբ՝ Կոնվենցիան նպատակ ունի երաշխավորելու ոչ թե տեսական կամ անիրական իրավունքներ, այլ իրավունքներ, որոնք գործնական են և արդյունավետ: Այս առումով դատարանը ընդգծում է, որ Կոնվենցիան 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորում է քաղաքացիական վեճերի լուծման նպատակով դատարանի մատչելիությունը: Ուստի, մատչելիությունը ներառում է ոչ միայն վարույթ հարուցելու իրավունքը այլև դատարանի կողմից վեճի լուծում ստանալու իրավունքը: Ըստ դատարանի՝ ձևական կլիներ, եթե Պայմանավորվող պետությունների ներպետական իրավական համակարգը թույլ տար անհատին քաղաքացիական վարույթ հարուցել դատարանի առջև առանց երաշխավորելու, որ գործը լուծում կստանար դատական վարույթի շրջանակներում վերջնական որոշմամբ: Նաև անհասկանալի կլիներ, եթե 6-րդ հոդվածի 1-ին մասով մանրամասն նկարագրվերին դատավարական երաշխիքները, որոնք տրվում են դատավարության մասնակիցներին՝ դատավարության արդարացիությունը, հրապարակայնությունը և արագությունը՝ առանց կողմերին երաշխավորելու, որ նրանց քաղաքացիական վեճերը վերջնական լուծում են ստանալու⁹⁵:

Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերոնշյալ դիրքորոշումների համադրության արդյունքում կարող ենք գալ այն եզրակացության, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է ապահովված լինել միայն այդ իրավունքի իրացման արդյունավետության երաշխավորվածության պարագայում: Այսինքն, **դատական պաշտպանության իրավունքը հնարավոր է իրացնել միայն այդ իրավունքի գործնականում պատշաճ դրսևորման ապահովման, այն է՝ դատական պաշտպանության իրավունքի շրջանակներում վեճի լուծման գործնական հնարավորության երաշխավորվածության պարագայում:**

Անդրադառնալով կոնկրետ դատական վարույթի կասեցման ինստիտուտին՝ հարկ է անդրադառնալ նաև Սահմանադրական դատարանի այն դիրքորոշմանը⁹⁶, որով դատարանն ընդգծում է դատական վարույթի կասեցման ինստիտուտի անհրաժեշտությունը որպես որոշակի գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանք: Նշվածով պայմանավորված դատարանը շեշտում է, որ արդար դատաքննության իրավունքը նախատեսող դրույթում ամրագրված «ողջամիտ ժամկետ» եզրույթը չի բացառում տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանքների հնարավոր առկայությունը և դրանով պայմանավորված՝ նախնական դատական նիստերի, գործի քննությունը

95 Տե՛ս Կութիչն ընդդեմ Խորվաթիայի (Kutić v. Croatia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը, գանգատ թիվ 48778/99, կետ 25:

96 Տե՛ս Սահմանադրական դատարանի 2013 թվականի փետրվարի 5-ի թիվ ՍԴՈ-1074 որոշում:

վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը:

Ուստի, ըստ դատարանի՝ տարաբնույթ օբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքն իրավաչափորեն երկարաձգող հնարավոր հանգամանքների առկայությունը և դրանով պայմանավորված՝ արդարադատության անաչառ ու արդյունավետ իրականացման շահերից ելնելով նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը հակասության մեջ չի գտնվում Սահմանադրությամբ ամրագրված՝ դատական քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու սկզբունքի հետ:

Այսինքն, Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումների համալիր ուսումնասիրությունը բերում է այն միանշանակ համոզմանը, որ **վարույթը կասեցնելու ինստիտուտը ոչ միայն չի հակասում անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներին, այլև հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է արդարադատության իրականացման անաչառությունն ու արդյունավետությունը ապահովելը:**

Այս առումով, ուշադրության է արժանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումն առ այն, որ կատարողական միջոցները հարկային վարույթի համատեքստում, որոնք ավտոմատ կերպով չեն կասեցվել, երբ հարկ վճարողը վիճարկել է կատարողական գործողությունների դեմ, դատարանի կողմից ընդունելի են և գտնվում են պետության լայն հայեցողության շրջանակներում: Միևնույն ժամանակ, դատարանն ընդգծել է, որ նման մեխանիզմը պետք է զուգակցվի ընթացակարգային երաշխիքներով՝ բացառելով անձանց բողոքարկումների սահմանափակման հնարավորություններն ու վերջիններիս կողմից իրենց շահերի արդյունավետ պաշտպանության անհնարինությունը⁹⁷:

Փաստորեն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ընդունելի է համարում կատարողական գործողությունները չկասեցնելը՝ հաշվի առնելով պետությունների լայն հայեցողությունը հարկերի վճարման ապահովման հարցում միջոցներ ձեռնարկելիս: Այնուամենայնիվ, դատարանն ընդգծել է, որ պետք է կատարողական գործողությունները վիճարկող անձը ապահովվի ընթացակարգային երաշխիքներով, որոնց առկայության պարագայում է միայն հնարավոր դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը: Ուստի, անհրաժեշտ է գտնել իրավունքներն ու պարտավորությունները կատարելուն ուղղված միջոցները հավասարակշռող լուծում:

⁹⁷ St' u Ռոուսկն Շվեդիայի (Rousk v. Sweden) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը, գանգատ թիվ 27183/04, կետ 117:

Հարկ է նշել, որ գործի վարույթի կասեցումը դատավարության ընթացքում ինքնին ինքնանպատակ չէ, այն սկզբունքային նշանակություն ունի անձի արդար դատաքննության, արդյունավետ դատական պաշտպանության իրավունքների իրացման հարցում:

Այսպես, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտը կարգավորող իրավական նորմերի ամբողջությունը վկայում է այն մասին, որ որոշ հանգամանքների առկայության պարագայում դատական գործի քննության ընթացքը որոշակի ժամանակահատվածով չընդհատելը կարող է դատական սխալի հիմք հանդիսանալ: **Վարույթի կասեցումը իրավական գործիք է, որն ուղղված է գործի արդյունավետ և ճիշտ քննությանն ու լուծմանը: Նշվածը կարևոր նշանակություն ունի օրինական և հիմնավորված դատական ակտ կայացնելու, ինչպես նաև դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցում: Կասեցումը, թեև ինքնին որոշակի ժամանակահատվածով դադարեցնում է գործի բնականոն ընթացքը, սակայն այն դրա հետ մեկտեղ նպատակ է հետապնդում ապահովելու՝ գործի արդարացի քննությունն ու դրան մասնակցող անձանց իրավունքների լիարժեք իրացումը:**

Խնդրի ուսումնասիրության շրջանակներում զուգահեռներ են տարվել «Սնանկության մասին» օրենքի 20.1-րդ հոդվածի և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի միջև: Այս առումով, հարկ է նշել, որ կատարողական վարույթի վերաբերյալ հարաբերությունները կարգավորող ներպետական օրենսդրությամբ այլ մոտեցում է որդեգրվել, որը թույլ է տալիս կասեցնել կատարողական վարույթի ընթացքը: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը, եթե՝ վարչական դատարանը վարույթ է ընդունել կատարման ենթակա հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ հայց:

Այսինքն, ի տարբերություն «Սնանկության մասին» օրենքի 20.1-րդ հոդվածի, որով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ կասեցման հիմքերի, ինչպես, օրինակ, վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելով պայմանավորված տվյալ գործի քննության անհնարինությունը, առկայության դեպքում հնարավոր է միայն առանձին պահանջների քննության կասեցումը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով նախատեսվում է հանրային իրավական դրամական պահանջի վարույթով պայմանավորված կատարողական վարույթի կասեցում:

Տվյալ պարագայում, սնանկության վարույթի շրջանակներում հանրային իրավական դրամական պահանջի առկայության դեպքում նույն պահանջի վերաբերյալ հայցի վարչական դատարանում քննությունը ու գործի ելքը կարող է խիստ կանխորոշիչ նշանակություն ունենալ սնանկության վարույթի շրջանակներում այդ պահանջի բավարարման հարցում:

Ուստի, անհրաժեշտ է սնանկության վարույթի ընթացքում որպես պահանջ գրանցված հանրային իրավական պահանջի վարչական կարգով վիճարկման հիմքով սնանկության վարույթն ամբողջությամբ կամ առանձին գրանցված պահանջների մասով (կատարմանն ուղղված գործողությունները ներառյալ) կասեցման հարցը դիտարկել դատական պաշտպանության արդյունավետության երաշխավորվածության համատեքստում:

Նշված գործով Սահմանադրական դատարանը 2021 թվականի սեպտեմբերի 23-ին կայացրել է թիվ ՍԴՈ-1610 որոշումը, որով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող⁹⁸:

10. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

ՀՀ վարչական դատարանը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածով, 2020 թվականի հոկտեմբերի 15-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրության 50-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով **ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում (...):**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական կարգավիճակի շրջանակների հաշվառմամբ՝ դիմումով վիճարկման առարկա դրույթների

⁹⁸ Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1610.pdf> հղումով:

իրավաչափությունը դիտարկվել է անձի կյանքի, ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության և լիազոր մարմնի կողմից որոշումների կայացման, վարչարարության և լիազորությունների ու գործառույթների պատշաճ իրականացման ապահովման՝ պատշաճ վարչարարության իրավունքների մրցակցության համատեքստում:

Դիմումով վիճարկվող կարգավորման իրավաչափությունը Մարդու իրավունքների պաշտպանը դիտարկել է փոխկապակցված հարցերի՝ վերոնշյալ երկու իրավունքների հնարավոր մրցակցության, ինչպես նաև խնդրո առարկա դրույթի կիրառման, այսինքն՝ ոստիկանության իրավասու ծառայողի՝ անհետաձգելի միջամտության որոշման **անհապաղ կայացման** պարագայում գործնականում հնարավոր խնդիրների տեսանկյունից:

Այսպես, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով **ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում**: Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ:

Խնդրո առարկա դրույթը դիմումով վիճարկվում է անձի պատշաճ վարչարարության իրավունքի իրականացման սահմանափակման տեսանկյունից, սակայն անհետաձգելի միջամտության որոշման կայացումն ամրագրող դրույթի շուրջ բարձրացված խնդիրները պետք է դիտարկել անձանց իրավունքների հավասարակշռման սկզբունքի կիրառմամբ՝ հաշվի առնելով անձի կյանքի, ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունքների ապահովումը և ընտանիքում բռնության երևույթի առանձնահատկությունները:

Դիմումով խնդրահարույց է համարվել այն, որ վիճարկվող դրույթի կիրառմամբ սահմանափակվում է ընտանիքում բռնության ենթադրյալ գործադրողի և ընտանիքում բռնության ենթարկված անձի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքը՝ առանց հաշվի առնելու անձանց հիմնական իրավունքների պաշտպանության հարցը և մրցակցող տարբեր իրավունքների հավասարակշռման սկզբունքը:

Եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողի՝ անհետաձգելի միջամտության անհապաղ կայացման հարցը դիմումում պատշաճ վարչարարության

իրավունքի ապահովման տեսանկյունից խնդրահարույց է դիտարկվել այն հաշվառմամբ, որ վարույթի անհապաղ իրականացման պահանջն ինքնին խնդրահարույց չէ, այլ խնդրահարույց է այդպիսի պահանջի իմպերատիվ և սպառիչ սահմանումը, ինչի արդյունքում ստացվում է՝ վարույթը պետք է իրականացվի կողմերի պատշաճ վարչարարության իրավունքի խախտմամբ:

Սակայն խնդրո առարկա դրույթների սահմանադրականության հարցը պետք է դիտարկել անհետաձգելի միջամտության որոշման նպատակի և էության առաջնահերթ հաշվառմամբ: Ընտանիքում բռնության խնդրի կարգավորման, անձանց իրավունքների պաշտպանության համար, ինչպես նաև կանխարգելիչ կարևոր նպատակ ունեն պաշտպանական միջոցները՝ տվյալ պարագայում քննարկման առարկա անհետաձգելի միջամտությունը:

Անհետաձգելի միջամտության որոշումը նպատակ է հետապնդում ընտանիքում բռնության անմիջական վտանգի դեպքում անհապաղ ապահովել անձի անվտանգությունը⁹⁹, ուստի այս պարագայում անհապաղ որոշման կայացման հարցը որպես խնդիր բարձրացնելը, հատկապես պատշաճ վարչարարության իրավունքի երաշխավորման տեսանկյունից հավասարակշիռ չէ անհետաձգելի միջամտության որոշման նպատակի և դրա կիրառման հետևանքով արդյունքների, խնդիրների կանխարգելման հարցերի հետ:

Անհետաձգելի միջամտության որոշման կայացման նպատակով պետք է հավասարակշռված լինեն տուժողի կամ վտանգի ենթարկվող անձի իրավունքների՝ կյանքի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության և ընտանեկան կյանքի, բռնությունից զերծ լինելու երաշխավորումն այլ իրավունքների, այս դեպքում՝ պատշաճ վարչարարության իրավունքի հետ:

Այս համատեքստում անհրաժեշտ է ընդգծել, որ ընտանիքում բռնության կանխարգելումը միայն երկու մասնավոր շահերի հավասարակշռման հարց չէ: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ «իշխանությունների կողմից միջամտությունը անձնական և ընտանեկան կյանքին կարող է անհրաժեշտ լինել մարդու առողջությունն ու իրավունքները պաշտպանելու կամ հանցագործությունները կանխելու համար¹⁰⁰: **Առանձնակի պետք է ընդգծել, որ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն նշել է, որ բռնություն գործադրողի իրավունքները չեն կարող գերադասվել կանանց կյանքի և ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունքներից¹⁰¹:**

⁹⁹ Հասանելի է <http://www.e-draft.am/projects/427/justification> հղումով:

¹⁰⁰ Տե՛ս Օփուզն ընդդեմ Թուրքիայի (Opuz v. Turkey) գործով 2009 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, կետ 144, Բ. ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (B. v. the Republic of Moldova) գործով 2013 թվականի հոկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 61382/09, կետ 46:

¹⁰¹ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե CEDAW/C/39/D/6/2005* , կետ 12.1.5

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները ապահովելու համար, որպեսզի իրավասու մարմինները, վերահաս վտանգի առկայության պայմաններում, լիազորված լինեն կարգադրելու, որպեսզի ընտանեկան բռնություն կատարողը բավարար ժամանակով հեռանա տուժողի կամ վտանգի տակ գտնվող անձի բնակարանից կամ արգելելու կատարողին, որպեսզի նա վերադառնա կամ շփում ունենա տուժողի կամ վտանգի տակ գտնվող անձի հետ: **Նշված հոդվածի համաձայն՝ ձեռնարկված միջոցները պետք է նախապատվությունը տան տուժողների կամ վտանգի տակ գտնվող անձանց անվտանգությունը**¹⁰²:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույցի համաձայն՝ անմիջական վտանգի դեպքում ընտանեկան բռնության ենթարկված անձի անվտանգությունը երաշխավորելու ամենաարդյունավետ միջոցը տուժողի և բռնություն գործադրողի միջև ֆիզիկական հեռավորություն ապահովելն է: Անվտանգությունը ապահովող այդպիսի արդյունավետ միջոցը հենց անհետաձգելի միջամտության որոշման կայացումն է:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույցի 266-րդ կետի համաձայն՝ կոնվենցիայի 52-րդ հոդվածի այս դրույթը պետություններից պահանջում է ապահովել, որ այս որոշումների իրականացման ընթացքում ձեռնարկված ցանկացած միջոցառման շրջանակներում պատշաճ կերպով հաշվի առնվի տուժողի կամ ռիսկի ենթարկվող անձի անվտանգությունը, ինչն ընդգծում է **այս միջոցառման պաշտպանիչ բնույթը**: Անմիջական վտանգը պետք է գնահատվի համապատասխան մարմինների կողմից¹⁰³:

Պետությունից պահանջվող պաշտպանության ստանդարտը սահմանվում է որպես պատշաճ ջանասիրություն: Պատշաճ ջանասիրության սկզբունքը ամրագրված է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 5-րդ հոդվածում, որը նախատեսում է պետությունների պարտականությունը կանխել, քննել, պատժել և փոխհատուցում տրամադրել կոնվենցիայով նախատեսված բռնության դեպքերում: Եվրոպայի խորհրդի

<https://opcedaw.files.wordpress.com/2012/01/yildirim-v-austria.pdf>

¹⁰² Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 52:

¹⁰³ Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, կետեր 264-266:

նախարարների կոմիտեի՝ Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին ուղղված՝ բռնությունից կանանց պաշտպանության վերաբերյալ Rec(2002) 5 հանձնարարականը սահմանում է բռնության դեպքերը կանխելու, քննելու և պատժելու համար պատշաճ ջանասիրություն ցուցաբերելը¹⁰⁴: ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (CEDAW) Ընդհանուր հանձնարարականում 28(2010)¹⁰⁵ և ընտանեկան բռնության վերաբերյալ հաղորդակցություններում¹⁰⁶ ևս հաստատել է պատշաճ ջանասիրության չափանիշը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անդրադարձել է պատշաճ ջանասիրության չափանիշին Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործով վճռում¹⁰⁷, ինչպես նաև մի շարք այլ գործերով՝ գտնելով, որ պետության՝ ընտանիքում բռնության պատշաճ կերպով քննության և պաշտպանության ծախսողումը կարող է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի¹⁰⁸, 3-րդ հոդվածի¹⁰⁹ կամ 8-րդ հոդվածի¹¹⁰ խախտում հանդիսանալ: Անհետաձգելի միջամտության որոշումն արագ գործիք է, որը ոստիկանության ծառայողները կարող են օգտագործել տուժողին պաշտպանելու և բռնության ենթարկված անձի ֆիզիկական ամբողջականության կամ առողջության վրա ազդող բռնության աճը կանխելու համար: **Բռնությունից պաշտպանության համակարգում դրա կարևորությունը բխում է հենց դրանով կայացվող հնարավոր գործողությունների արագությունից**¹¹¹:

¹⁰⁴ Տե՛ս https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e2612 հղումով, 2021 թվականի ապրիլի 1-ի դրությամբ:

¹⁰⁵ Տե՛ս ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (CEDAW) Ընդհանուր հանձնարարականի 28(2010), կետ 19, <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G10/472/60/PDF/G1047260.pdf?OpenElement> հղումով. հասանելի է 2021 թվականի ապրիլի 1-ի դրությամբ:

¹⁰⁶ Տե՛ս Յիլդիրիմն ընդդեմ Ավստրիայի (Yildirim v. Austria) 2007 թվականի վճիռը, Գոեցկեն ընդդեմ Ավստրիայի (Goetze v. Austria) 2007 թվականի վճիռը:

¹⁰⁷ Տե՛ս Օփուզն ընդդեմ Թուրքիայի (Opuz v. Turkey) գործով 2009 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, կետեր 77-86 և 131-149:

¹⁰⁸ Տե՛ս Օփուզն ընդդեմ Թուրքիայի (Opuz v. Turkey) գործով 2009 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02:

¹⁰⁹ Տ՛ս Բ. ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (B. v. the Republic of Moldova) գործով 2013 թվականի հոկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 61382/09, կետ 46

¹¹⁰ Տե՛ս Ա. ընդդեմ Խորվաթիայի (A v. Croatia) գործով 2010 թվականի վճիռ, Հաջդուովան ընդդեմ Սլովակիայի (Hajduova v. Slovakia) գործով 2010 թվականի վճիռը:

¹¹¹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի «Անհետաձգելի միջամտության որոշումները ընտանիքում բռնության դեպքերում» հետազոտությունը <https://edoc.coe.int/en/violence-against-women/7426-emergency-barring-orders-in-situations-of-domestic-violence-article-52-of-the-istanbul-convention.html> հղումով, էջ 10:

Անհետաձգելի միջամտության որոշումների էությունից է բխում դրանց արագ կայացումը, ուստի անհապաղությունն անհրաժեշտ կարևոր բաղադրիչ է, և դրանից բացառություն սահմանումը կարող է խնդրահարույց լինել:

Դիմումում ներկայացվող հիմնավորումները պարզաբանում են, որ որոշ դեպքերում այդ անհապաղության հետևանքով տուժում են ընտանիքում բռնության ենթարկված անձիք՝ ներկայացնելով անհետաձգելի միջամտության որոշումների դատական կարգով բողոքարկման և դրա արդյունքում դրանց վերացման մասին վիճակագրություն, ինչպես նաև պնդելով, որ անհապաղության դեպքում ոստիկանության ներկայացուցիչները բացատրություն են վերցնում բռնություն գործադրած անձանցից և ոչ տուժողներից, ըստ այդմ՝ ամբողջությամբ չի ապահովվում տուժողների իրավունքների պաշտպանությունը:

Սակայն հարկ է նկատել, որ դիմումում բարձրացված խնդիրներն առավելապես գործնական, իրավունքների պաշտպանության և դրանց իրականացման երաշխավորման գործընթացում իրավասու մարմինների ներկայացուցիչների մասնագիտական պատրաստվածության և կարողությունների հարց է, ինչը պետք է լուծել դրանց զարգացման ուղղությամբ քայլեր ձեռնարկելով, այլ ոչ թե որոշման կայացման անհապաղության երաշխիքից բացառություն սահմանող օրենսդրական փոփոխությունների իրականացմամբ:

Մինչդեռ, անհետաձգելի միջամտության որոշումների կայացման անհապաղությունից բացառություն սահմանելով՝ այդ որոշման կայացումը գործնականում կարող է իմաստազուրկ դառնալ՝ ելնելով դրա պաշտպանական էությունից ու նպատակից: Ավելին, ընտանեկան բռնության խնդրի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընտանեկան բռնությունը և դրա հետևանքները հաճախ ավելի լուրջ կարող են լինել, դրանք հաճախ կրկնվում և ժամանակի ընթացքում ավելի են սրվում, քան բռնության այլ ձևերի դեպքում: Հետևաբար, կարևոր է ապահովել, որ ընտանեկան բռնության դեմ պայքարը և բռնությունից անձանց իրավունքների պաշտպանությունն իրականացվեն պատշաճորեն, արագ, արդյունավետ և խնդրի առանձնահատկությունների հաշվառմամբ:

Այս ամենի հետ մեկտեղ, պետք է նշել, որ անհետաձգելի պաշտպանական որոշումների կայացումը կամ առհասարակ դրանց կիրառումը պետք է հիմնված լինեն իրավական հստակ երաշխիքների վրա: Առաջնային մտահոգություն պետք է լինի այնպիսի մեխանիզմի ձևավորումը, որն արդյունավետորեն ապահովում է ընտանեկան բռնության տուժողի կամ դրա հնարավոր վտանգի ենթարկված անձի անվտանգությունը, բայց կարևոր է նաև պահպանել հիմնական իրավական սկզբունքները, ինչպիսիք են՝ համամասնությունը, օրինականությունը, պատշաճ գործընթացի ապահովումը և դատական վերանայման հնարավորությունը:

Սրանք երաշխիքներ են անհետաձգելի միջամտության որոշման կիրառությունը կարգավորող իրավական դրույթների և ընթացակարգերի կիրարկման համար՝ պաշտպանելով ընտանիքում ենթադրյալ բռնություն գործադրած անձին

պաշտպանական միջոցների՝ անհետաձգելի միջամտության հնարավոր անհիմն կամ անհարկի կիրառումից:

Վերոթվարկյալ երաշխիքները՝ համամասնության, օրինականության, պատշաճ գործընթացի ապահովման և դատական վերանայման հնարավորության սկզբունքները և դրանց իրականացման համար մեխանիզմները տվյալ պարագայում նախատեսված են ընտանիքում բռնության դեմ պայքարի և դրա կանխարգելման օրենսդրությամբ: Այսինքն, ընտանիքում բռնության դեմ պայքարի և դրա կանխարգելման օրենսդրությունը հնարավոր ոչ իրավաչափ միջամտությունների առումով հաշվի է առնում ընտանեկան բռնության երկու կողմերի՝ և՛ տուժողի, և՛ ենթադրյալ բռնարարի իրավունքներն ու շահերը:

Այսպիսով, վիճարկվող կարգավորումները՝ առաջնահերթ ուղղված լինելով բռնությունից տուժած անձանց պաշտպանությանը, ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով ամրագրված իրավունքների իրականացման, մասնավորապես՝ պատշաճ վարչարարության իրավունքի ոչ համաչափ սահմանափակման կամ խախտման խնդիր չեն առաջացնում:

Նշված գործով Սահմանադրական դատարանը 2021 թվականի ապրիլի 6-ի թիվ ՍԴԱՈ-65 որոշմամբ կարճել է գործի վարույթը¹¹²:

11. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի, 48-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի՝ դրանց տված մեկնաբանությունների համատեքստում՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողները, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով և 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 2021 թվականի ապրիլի 12-ին դիմել են ՀՀ սահմանադրական դատարան «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի, 48-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի՝ դրանց տված մեկնաբանությունների համատեքստում՝ Սահմանադրության 28-րդ հոդվածին, 48-րդ հոդվածին, 61-րդ և 63-րդ հոդվածներին, 78-րդ և 79-րդ հոդվածներին, 80-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

¹¹² Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/working/2021/pdf/sdav-65.pdf> հղումով:

Դիմումում վիճարկման առարկա է դարձել այն հարցը, որ առկա է օրենսդրական բաց՝ կապված դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները և իրենց դիտորդների (ՁԼՄ ներկայացուցիչների) սուբյեկտի իրավունքի խախտումները վարչական և դատական կարգով բողոքարկելու հնարավորության բացակայության հետ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Ընտրությունների դիտորդական առաքելությունը գործընթաց է, որը ներառում է ընտրական գործընթացի բոլոր փուլերի մասին համակարգված տեղեկությունների հավաքագրում, դրանց վերլուծություն, ինչպես նաև արդյունքների մասին զեկուցում և դրանց հիման վրա առաջարկությունների ներկայացում: Դիտորդական առաքելության գաղափարը հիմնված է մարդու հիմնարար իրավունքների վրա, ինչպիսիք են՝ «արդար ընտրությունների, հասարակական գործերի մասնակցելու, միավորվելու և ընտրական համատեքստում տեղեկություն պահանջելու, ստանալու և փոխանցելու իրավունքները»¹¹³: **Ընտրությունների դիտորդական աշխատանքը ընտրական գործընթացի օրինականության գնահատման կարևոր գործիք է, որը նպաստում է դրա թափանցիկության և ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողության աճին:** Դիտորդական առաքելությունը, ըստ էության, չի սահմանափակվում միայն բուն քվեարկության օրվանով և ներառում է նաև դրանից առաջ և հետո կատարվող, ընտրությունների հետ կապված իրադարձությունները¹¹⁴:

Ինչպես ցանկացած քաղաքական երևույթում, ընտրությունների ընթացքում նույնպես նկատվում են օրենքի բազմաթիվ խախտումներ, որոնք խաթարում են ընտրությունների կազմակերպումը և անցկացումը, ընտրությունների արդյունքների ամփոփումը և այլն: Ուստի, առաջանում է անհրաժեշտություն ընտրությունների ընթացքում ներգրավել մի այնպիսի կողմնակի ուժ, որը կարող է իրականացնել հսկողություն քաղաքացիների ընտրական իրավունքի ապահովման նկատմամբ, հավաքել օբյեկտիվ և ամբողջական տեղեկատվություն ընտրությունների ընթացքի վերաբերյալ և այդ եղանակով նվազագույնի հասցնել ընտրությունների ընթացքում հնարավոր իրավախախտումները¹¹⁵: Նման առաքելություն հենց իրականացնում են դիտորդները:

¹¹³ Տե՛ս՝ Ընտրությունների տեղական դիտորդների գլոբալ ցանցը (GNDEM), հասանելի է <https://www.gndem.org/about/> հղումով:

¹¹⁴ Տե՛ս՝ «Միջազգային ընտրական չափանիշների կիրառումը», Եվրոպայի խորհրդի ձեռնարկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար, հասանելի է <https://rm.coe.int/16806f4686> հղումով:

¹¹⁵ Տե՛ս՝ «Ընտրական իրավունքը և ընտրական գործընթացը Ռուսաստանի Դաշնությունում», Ուսումնական ձեռնարկ, Ա. Վեշնյակով, Մոսկվա, էջ 274:

Հասանելի է՝ <http://www.rcoit.ru/upload/iblock/b62/26.pdf> հղումով:

Դիտորդների կողմից ընտրական գործընթացի նկատմամբ իրականացվող մոնիտորինգի հիմնական նպատակը ընտրությունների նախապատրաստման և անցկացման օրինականության ապահովումն է¹¹⁶: ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների բյուրոն ընտրությունների դիտարկման ուղեցույցում (Վարշավա, 1997թ.) հստակ նշել է, որ **դիտորդները գնահատում են ընտրական գործընթացի համապատասխանությունը միջազգային հիմնարար սկզբունքներին, դրանք են՝ ընտրությունների պարբերականությունը, ազատությունը, արդարությունը, ընտրական իրավունքի հավասարությունն ու համընդհանրությունը, հրապարակայնությունը, գաղտնի քվեարկությունը: Յուրաքանչյուր պետություն կրում է պատասխանատվություն այդ միջազգային սկզբունքների պահպանման համար**¹¹⁷:

Կախված վերոնշյալ և մի շարք այլ հանգամանքների արդյունավետ իրականացման ապահովման անհրաժեշտությունից՝ առանձնացվում են դիտորդական առաքելության իրականացման հետևյալ հիմնական նպատակները¹¹⁸.

- *Մարդու համընդհանուր իրավունքների, մասնավորապես, քաղաքացիական և քաղաքական իրավունքների խթանում և պաշտպանություն,*

- *ընտրական գործընթացի վերաբերյալ տեղեկացված, անկախ և անկողմնակալ տեսակետի տրամադրում, ընտրական գործընթացի թափանցիկության խթանում և արդարության ապահովում,*

- *ընտրական գործընթացի թերությունների վերլուծություն և բարեփոխումների համար առաջարկությունների ներկայացում,*

- *ներպետական օրենսդրությանն ու միջազգային չափանիշներին ընտրությունների համապատասխանության գնահատում՝ դիտորդական աշխատանքների պլանավորումը զեկույցների պատրաստման տեսանկյունից:*

Դիտորդական առաքելությունը, ըստ էության, ընտրական գործընթացի նկատմամբ մոնիտորինգ իրականացնելով, ապահովում է ընտրական գործընթացի լեգիտիմությունը, ընտրությունների նկատմամբ վստահությունը, զարգացման հեռանկարների մշակումը,

¹¹⁶ Տե՛ս՝ «Դիտորդական առաքելության ձեռնարկ» հրապարակվել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից, 6-րդ հրատարակություն, Վարշավա, 2010 թվական, հասանելի է՝ <https://www.osce.org/files/f/documents/5/e/68439.pdf> հղումով:

¹¹⁷ Տե՛ս՝ «Դիտորդական առաքելությունը և դրա իրականացման կարգը ըստ ՀՀ նոր ընտրական օրենսգրքի» սեմինար-քննարկման նյութերի ժողովածու, Վ.Դ. Ավետիսյան, Երևան, 2017 թվականի մարտի 4, հասանելի է՝ <http://mimrd.am/wp-content/uploads/2017/03/-1.pdf> հղումով:

¹¹⁸ Տե՛ս՝ «Ընտրությունների վերաբերյալ զեկույց պատրաստելը», Եվրոպայի խորհրդի ձեռնարկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար, 2016 թվականի օգոստոս, Եվրոպայի խորհրդի հրատարակչություն, հասանելի է՝ <https://rm.coe.int/16806f4684> հղումով:

ընտրախախտումների բացառումը կամ նվազեցումը և այլն¹⁹: Դիտորդական առաքելության իրականացման համար էական նշանակություն ունեն նաև ընթացակարգային երաշխիքները, մասնավորապես, ընտրությունների կազմակերպումը անկախ ու անկողմնակալ մարմնի կողմից և դիտորդների անխոչընդոտ գործունեության համար համապատասխան հնարավորություններ նախատեսելը:

Համաձայն «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի իրավակարգավորումների՝ դիտորդական առաքելություն իրականացնող սուբյեկտները չեն հանդիսանում թեկնածուների, կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների ներկայացուցիչները: Սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունը հանգում է նրան, որ դիտորդական առաքելություն կարող են իրականացնել հետևյալ սուբյեկտները՝ միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա հասարակական այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր և ՀՀ այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարին ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր: Սահմանադրական օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի բովանդակությունից բխում է, որ դիտորդական առաքելություն իրականացնող սուբյեկտը չի կարող աջակցել որևէ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության, իսկ այս պահանջը խախտելու պարագայում կարող է հեռացվել: Հետևաբար, ՀՀ-ում դիտորդները հանդես են գալիս ընտրական իրավահարաբերությունների ինքնուրույն սուբյեկտի կարգավիճակում:

Միջազգային պրակտիկայի տեսանկյունից դիտորդի կարգավիճակը դիտարկելիս պետք է տարբերակել այն դեպքերը, երբ վերջինս հանդես է գալիս որպես թեկնածուի կամ ընտրական միավորման ներկայացուցիչ, և այն դեպքերը, երբ վերջինս հանդես է գալիս՝ որպես ընտրական իրավահարաբերությունների անկախ, ինքնուրույն սուբյեկտ: Ի տարբերություն առաջինի՝ երկրորդ դեպքում դիտորդը հետապնդում է ոչ թե այլ սուբյեկտների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության, այլ ընդհանուր առմամբ ընտրությունների բնականոն ընթացքը ապահովելու նպատակ: Հենց այս պարագայում է, որ դիտորդը, բացի իր սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության հնարավորություններից, պետք է օժտված լինի ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու հնարավորությամբ:

¹⁹ Տե՛ս՝ Ժողովրդավարության և ընտրական օժանդակության միջազգային ինստիտուտ, Ընտրությունների էթիկական և մասնագիտական դիտարկման վարքագծի կանոններ, 1997, հասանելի է <https://www.idea.int/sites/default/files/publications/code-of-conduct-for-ethical-and-professional-administration-of-elections.pdf> հղումով:

Բողոքարկման արդյունավետ համակարգի կենսագործումն առաջնային և հիմնական միջոց է ընտրական իրավունքների պաշտպանության գործում: Բողոքարկման արդյունավետ համակարգին առնչվող խնդիրները հատկապես կարևորվել են նաև միջազգային դիտորդական առաքելությունների կողմից, իսկ «Եվրոպայում ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության վիճակի վերաբերյալ» Եվրոպայի խորհրդի 2016 թվականի զեկույցում նշվել է, որ պատշաճորեն իրականացվող դիտորդական առաքելության շնորհիվ ընտրախախտումները հանրային հնչեղություն են ստանում: Զեկույցը առաջարկում է նաև բարձրացնել ընտրական գործընթացներում տեղական դիտորդական աշխատանքների որակը¹²⁰:

2018 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ «Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի» դիտորդական առաքելության 2019 թվականի վերջնական զեկույցում նշվում է, որ որոշումների դեմ բերվող բողոքների մի մասով, կիրառվել է նեղ իրավական մեկնաբանություն՝ պատճառաբանելով, որ բողոք բերելու իրավունք ունեն միայն անհատ դիտորդները և ոչ նրանց առաջադրած ԲՀԿ-ները¹²¹:

Այսպիսով, ըստ կատարված ուսումնասիրությունների՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ ընտրությունների նպատակային դիտորդական աշխատանքները կարող են կանխարգելել մարդու ընտրական իրավունքների և պետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտումները (պետական գործերում մասնակցելու, քվեարկելու, ընտրվելու իրավունքը և հնարավորությունը, խտրականության արգելքի և քաղաքացիների համահավասարության, արտահայտման, ժողովների և միավորման ազատությունը, արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը և այլն):

Ավելին, ընտրական գործընթացի անկողմնակալ դիտարկումը և կոնկրետ առաջարկությունների ներկայացումը կարող են բարելավել ներպետական ընտրական օրենքները և ընտրական պրակտիկան, ինչպես նաև կարող են հիմք ծառայել ընտրական համակարգի առավել խորը բարեփոխումների համար:

¹²⁰ Տե՛ս՝ Եվրոպայում ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության վերլուծություն՝ հիմնված Եվրոպայի խորհրդի մոնիտորինգի մեխանիզմների և վերահսկող մարմինների եզրակացությունների հիման վրա, Թորթյորն Յագլանդ, Նիկոսիա, Նախարարների կոմիտեի 127 -րդ նստաշրջան, 2017 թվականի մայիսի 19:

Հասանելի է՝ <https://rm.coe.int/rapport-sg-2017-version-russe/168072b950> հղումով:

¹²¹ Տե՛ս՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների 2018 թվականի դեկտեմբերի 9-ի ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույց», ԵԱՀԿ, Վարշավա, 2019 թվականի մարտի 7-ին, հասանելի է՝ <https://www.osce.org/files/f/documents/b/7/413555.pdf> հղումով:

Դիտորդական առաքելությունն ընտրությունների նկատմամբ հանրային վերահսկողությունը, դրա առանցքային նշանակությունն առաջին հերթին դրսևորվում է հավասար, ազատ ու գաղտնի ընտրություններ ապահովելու գործընթացում, իսկ դիտորդների բողոքարկման իրավունքը սուբյեկտիվ իրավունքի խախտման փաստի առկայության հետ պայմանավորելը, փաստորեն, որպես լիարժեք գործիք չի ծառայում դիտորդական առաքելության առջև դրված խնդիրների իրացման տեսանկյունից: Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանի գնահատմամբ՝ Սահմանադրական օրենքում նախատեսված իրավակարգավորումները՝ դիտորդական առաքելություն իրականացնողների բողոքարկման իրավունքի առումով, համարժեք կառուցակարգեր չեն նախատեսում և այդպիսով չեն ամրագրում բավարար իրավական հիմքեր՝ դիտորդական առաքելության արդյունավետության և ըստ այդմ, ընտրությունների նկատմամբ հասարակական վստահության բարձրացման հեռանկարի առումով:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ ՍԴԱՌ-182 որոշմամբ նշված գործի վարույթը կարճվել է¹²²:

12. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

ՀՀ նախագահը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասի» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և 73-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 2021 թվականի ապրիլի 15-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

Դիմումում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի կարգավորումները, որոնք վերաբերում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով սահմանված՝ վիրավորանքի և զրպարտության փոխհատուցման չափին, վիճարկվել են Սահմանադրության 42-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից:

Օրենքով նախատեսվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման

¹²² Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/working/2021/pdf/sdav-182.pdf> հղումով:

կարգը և պայմանները» վերտառությամբ 1087.1-րդ հոդվածում ամրագրված՝ վիրավորանքի և զրպարտության համար սահմանված փոխհատուցման չափերի բարձրացում՝ վիրավորանքի դեպքում գործող խմբագրության նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը դարձնելով 3000-ապատիկ, իսկ զրպարտության դեպքում՝ 2000-ապատիկը՝ 6000-ապատիկ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Քաղաքացիական օրենսգրքով լրատվական գործունեություն իրականացնող սուբյեկտի կողմից տարածած տեղեկատվության մեջ զրպարտության առկայության դեպքում նախատեսվում է լրատվության այդ միջոցով զրպարտություն համարվող տվյալների հրապարակային հերքում և (կամ) դրանց վերաբերյալ իր պատասխանի հրապարակման պարտականություն: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով: Այդուամենայնիվ, նման դեպքում անձը չի կարող օգտվել Օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներից:

Սահմանադրական դատարանում վիճարկման առարկա դարձած դրույթները դիտարկվել են մամուլի և խոսքի ազատության երաշխավորման, ինչպես նաև համաչափության սահմանադրական սկզբունքի ապահովման տեսանկյունից:

Ժողովրդավարության հենասյուներից մեկը համարվող մամուլի ազատությանը բազմիցս անդրադարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ չնայած **լրատվամիջոցը չպետք է շրջանցի որոշ սահմաններ, այդուամենայնիվ, դրա պարտականությունն է հասարակությանը տրամադրել տեղեկություն և մտքեր դրան հետաքրքրող թեմաների վերաբերյալ: Սա ինքնին հանդիսանում է նաև հասարակության տեղեկացված լինելու երաշխիք: Նման պայմանների բացակայության արդյունքում լրատվամիջոցը կարող է չունենալ հնարավորություն կատարելու իր՝ որպես հանրային վերահսկող մարմնի (public watchdog) գործառույթները**¹²³:

Քաղաքական գործիչների վերաբերյալ խոսքի ազատության սահմանափակումն ավելի նեղ է, քան մասնավոր անձանց դեպքում: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչներն անխուսափելիորեն և գիտակցաբար դառնում են բաց՝ լրագրողների և

¹²³ Տե՛ս Դիչանդը և այլոք ընդդեմ Ավստրիայի գործով, Եվրոպական դատարանի վճիռը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-60171>:

հասարակության կողմից իրենց խոսքի ու գործի մանրագնին ուսումնասիրության համար, և հետևաբար պետք է դրսևորեն հանդուրժողականություն¹²⁴: Անընդունելի է, որ լրագրողը զրկված լինի քննադատողական բնույթի դատապարտումներ հրապարակելուց այն պատճառով, որ նա չի կարող հաստատել դա¹²⁵:

Միանշանակ է այն, որ վիճարկվող դրույթներով նախատեսված անհամաչափ գործիքակազմի կիրառումը էական ազդեցություն է ունենալու լրագրողական գործունեության վրա:

Այս առնչությամբ Եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ **անգամ եթե լրագրողը չի դատապարտվում ազատագրկման, սանկցիայի չափը, ներառյալ վնասները և դատական ծախսերը, կարող են գերազանցել նրան, ինչը ողջամտորեն համեմատելի է մամուլի ազատության հիմքում ընկած հիմնարար սկզբունքներին և, այդպիսով, զսպող ազդեցություն (chilling effect) ունենալ անձի խոսքի ազատության վրա: Այդ պատժամիջոցների համաչափությունը գնահատելիս Եվրոպական դատարանը դիտարկում է ֆինանսական կորուստները՝ անկախ նրանից, թե դրանք առաջացել են տուգանքների, թե դատական ծախսերի հետևանքով¹²⁶:**

Եվրոպական դատարանը մի շարք գործերով արձանագրել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության իրավունքի խախտում՝ լրագրողների նկատմամբ կիրառված սանկցիաների զսպող ազդեցության հիմքով, երբ օրինակ, լրագրողը ստիպված է եղել վճարելու ոչ նյութական վնասի համար փոխհատուցումն ու դատական ծախսերը կամ երբ պատժամիջոցներն այնքան խիստ էին, որ հանգեցրել են թերթի գործունեության դադարեցմանը¹²⁷:

Այսպիսով, վերոնշյալ իրավական դիրքորոշումների ու մոտեցումների ընդհանրական մոտեցումն է անվերապահորեն աջակցել քաղաքացիական հասարակության հենասյուներից

¹²⁴ Տե՛ս Լինգենս ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը, <http://hudoc.echr.coe.int/fre?i=001-57523>:

¹²⁵ Տե՛ս Օբերսչլիկն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը, <http://hudoc.echr.coe.int/tur?i=001-57716>:

Տե՛ս Աչվաբեն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը, <http://hudoc.echr.coe.int/tur?i=001-57757>:

Տե՛ս Դալբանն ընդդեմ Ռումինիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը, <http://hudoc.echr.coe.int/tur?i=001-58306>:

¹²⁶ Հասանելի է https://www.researchgate.net/publication/325258249_Chilling_Effect_as_a_European_Court_of_Human_Rights'_Concept_in_Media_Law_Cases/link/5b016942a6fdccf9e4f5ee98/download հղումով:

¹²⁷ Տե՛ս, մասնավորապես, Ghiulfer Predescu v. Romania գործով 2017 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 29751/09, Tonsbergs Blad AS and Haukom v. Norway գործով 2007 թվականի մարտի 3-ի վճիռը, գանգատ թիվ 510/04:

մեկի՝ ազատ մամուլի գործունեության անխոչընդոտ իրականացմանը, զարգացմանն ու պաշտպանությանը: Խոսքի կամ կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման նպատակով պետությունները պետք է ստանձնեն այնպիսի հանձնառություն, որը չի խեղաթյուրի կամ ուղիղ սպառնալիքի տակ դնի լրագրողական կամ մամուլի աշխատանքը:

Հետևաբար, պետությունների ձեռնարկած միջոցները չպետք է լինեն այնքան խիստ և անհամաչափ, որ փոխհատուցման և պատասխանատվության մեխանիզմները դուրս գան իրենց նպատակային նշանակության տիրույթից, իսկ իրավունքների պաշտպանության միջոցները դառնան պատրանքային: Այս տրամաբանությամբ, **վիճարկվող դրույթներով վիրավորանքի կամ զրպարտության համար փոխհատուցման գումարային սահմանաչափերի բարձրացումը խնդրահարույց է լրագրողական գործունեության նկատմամբ ազդեցության առումով, այսինքն՝ կարող է առաջ բերել անհամաչափ ֆինանսական պարտավորություն լրագրողի կամ լրագրողական կազմակերպության համար, որը թե՛ տեսականորեն, թե՛ գործնականում քրեական պատժից կտարբերվի միայն եզրութաբանական առումով և ոչ թե բովանդակային:**

Օրենսդիրը, վիրավորանքին և զրպարտությանը վերաբերող նորմերը սահմանելով Օրենսգրքի 1087.1 հոդվածում, հանրային իրավունքից տեղափոխել է մասնավոր իրավունքի ոլորտ: Այս իրավահարաբերությունների մասնավոր տիրույթ տեղափոխելը չի բացառում կողմերից մեկի՝ վիրավորանք կամ զրպարտություն հասցնողի՝ ենթադրյալ իրավախախտ լինելու հանգամանքը՝ անկախ նրանից, թե այդ արարքի համար նախատեսված է հանրային ռեպրեսիվ պատասխանատվության միջոց՝ այն է տուգանքի կիրառումը, թե ուղղակի պատճառված ոչ նյութական վնասի հատուցում:

Վերոգրյալից ելնելով՝ վիճարկվող դրույթներով սահմանված՝ պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցման չափը դիտարկվել է Սահմանադրությամբ ամրագրված համաչափության սկզբունքի համատեքստում:

Այսպես, Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Անդրադառնալով սահմանադրական այս սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-997 որոշմամբ արտահայտել է դիրքորոշում, ըստ որի՝ վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունը՝ անկախ դրա բնույթից ու չափից, հանդիսանում է **միջամտություն անձի արտահայտվելու ազատությանը**: Նման ձևով արտահայտվելու ազատությանը միջամտության և այդ միջամտությամբ **հետապնդվող իրավաչափ նպատակի (տվյալ դեպքում՝ անձի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու նպատակի) միջև արդարացի**

հավասարակշռությունը պայմանավորող գործոն է, ի թիվս այլնի, վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանվող պատասխանատվության համաչափությունն անձի պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասին: Այս առնչությամբ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը պահանջում է, որպեսզի վիրավորանքի կամ զրպարտության համար **սահմանվող փոխհատուցումը համաչափության ողջամիտ հարաբերակցություն ունենա անձի հեղինակությանը պատճառված վնասի հետ:** Արատավորող արտահայտության համար նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձին պատճառված գույքային վնասից: Ցանկացած այլ նպատակով վնասի փոխհատուցումն օգտագործելն անթույլատրելիորեն սահմանափակող ազդեցություն կունենա ազատորեն արտահայտվելու իրավունքի վրա, ինչը չի կարող գնահատվել որպես հիմնավորված անհրաժեշտություն ժողովրդավարական հասարակությունում:

Սահմանադրական դատարանի նույն որոշման համաձայն՝ վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանվող փոխհատուցման չափի և անձի համբավին ու արժանապատվությանը պատճառված վնասի միջև համաչափության պահանջը հավասարապես ուղղված է և՛ օրենսդրին, և՛ իրավակիրառողին: Օրենսդրին այս պահանջն առաջադրում է համաչափության ապահովմանն ուղղված համապատասխան օրենսդրական երաշխիքներ սահմանելու խնդիր: (...) Մասնավորապես, օրենսդիրը բոլորովին այլ իրավահարաբերության հարթություն է տեղափոխել զրպարտության կամ վիրավորանքի հետևանքով պատճառված գույքային վնասի խնդիրը և դատարաններին իմպերատիվ պահանջ է ներկայացնում՝ այն հաշվի չառնել վիճարկվող հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով նախատեսված դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս (մաս 11): Իրավակարգավորման հստակ տրամաբանությունն է, որ, մի կողմից, **մարդու պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու դիմաց փոխհատուցումն իրավակիրառական պրակտիկայում չպետք է շփոթել գույքային վնասի հետ, մյուս կողմից՝ այդ փոխհատուցումը չպետք է դիտել որպես տույժի կամ տուգանքի ձևով սահմանվող պատիժ:** Հակառակ պարագայում կիմաստագրկվի զրպարտության ապաքրեականացման ամբողջ գաղափարը»¹²⁸:

Ուղենշային է նաև Սահմանադրական դատարանի այն մոտեցումը, որը ենթադրում է վնասի փոխհատուցման այնպիսի չափերի սահմանում, որոնք չեն պարունակի տույժի կամ տուգանքի ձևով պատժի տարրեր, քանի որ հակառակ դեպքում այն առարկայազուրկ կդարձնի՝ նշված իրավահարաբերությունների մասնավոր իրավունքի ոլորտ տեղափոխելը:

¹²⁸ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի՝ ՀՀ սահմանադրության 14-րդ հոդվածին, 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին և 43-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՌ-997 որոշումը, <https://www.concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-997.pdf>

Հարկ է նկատել, որ գործող Օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի կարգավորումները դեռևս դրանց նախագծման փուլում ներկայացվել են Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Մամուլի ազատության հարցերով ներկայացուցչի գրասենյակի կարծիքին: Կարծիքում դիտարկված հարցերից էին զրպարտության և վիրավորանքի դիմաց փոխհատուցման չափը և առանձին դեպքերում դրա կիրառման չափանիշները (օրինակ՝ հայցվորի գույքային դրություն, առավելագույն չափի կիրառումը ծայրահեղ դեպքերում և այլն):

Այդ ժամանակվա առաջարկվող նախագծային կարգավորումներով՝ զրպարտության համար սահմանվում էին հետևյալ փոխհատուցման չափերը՝ նվազագույն ամսական աշխատավարձի **500-ապատիկը, 1000-ապատիկը**, եթե զրպարտությունը տարածվել է մամուլում անձի կոպիտ անփութության և դիտավորության դեպքերում, ինչպես նաև **2000-ապատիկը՝** մամուլում հրապարակվելու դեպքում: **Կարծիքում այս չափերը գնահատվել են որպես շատ բարձր**¹²⁹:

Անդրադառնալով փոխհատուցման չափի առաջարկվող էական բարձրացմանը՝ հարկ է նկատել, որ գործող կարգավորումներով պատասխանողի գույքային դրությունը համարվում է չափազանց կարևոր հանգամանք, ինչը կապված է նաև երկրում նվազագույն աշխատավարձի հետ: Այլ կերպ՝ վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվության եղանակը և դրամական չափը որոշելիս որպես էական հանգամանք, պետք է հաշվի առնվի նաև պատասխանողի գույքային վիճակը և երկրում նվազագույն աշխատավարձի չափը:

Նշվածի նպատակն է համաչափության սկզբունքի գործնական ապահովումն այն առումով, որ **փոխհատուցման պարտականություն կրողն անհարկի ծանր կամ անհաղթահարելի գույքային բեռի տակ չհայտնվի**:

Հարցն ավելի զգայուն է, եթե պատասխանողը իրավունքի ենթադրյալ խախտումը կատարողը լրագրող է կամ լրատվամիջոց: Այստեղ անհրաժեշտ է սահմանել փոխհատուցման այնպիսի չափ, որպեսզի չխոչընդոտվի լրատվամիջոցի բնականոն աշխատանքը:

Ուստի, հարցն անհրաժեշտ է քննարկել նաև զրպարտության և վիրավորանքի դեպքում փոխհատուցման չափի առաջարկվող բարձրացման և նվազագույն ամսական աշխատավարձի հարաբերակցության տեսանկյունից: Մասնավորապես, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանել 68.000 դրամ:*

Գործող կարգավորումներով վիրավորանքի և զրպարտության նախատեսվող փոխհատուցման առավելագույն չափերը նվազագույն ամսական աշխատավարձից շատ են

¹²⁹ Տե՛ս հետևյալ հղումով, էջ 15, <https://www.osce.org/files/f/documents/f/9/67858.pdf>

համապատասխանաբար՝ 14.7 (1.000.000 ՀՀ դրամ) և 29.4 (2.000.000 ՀՀ դրամ) անգամ: Առաջարկվող կարգավորմամբ վիրավորանքի և զրպարտության նախատեսվող փոխհատուցման առավելագույն չափերը նվազագույն ամսական աշխատավարձից շատ են համապատասխանաբար՝ 44.1 (3.000.000 ՀՀ դրամ) և 88.2 (6.000.000 ՀՀ դրամ) անգամ:

Այսպիսով, վերը վկայակոչվածի լույսի ներքո կարելի է եզրակացնել, որ վիրավորանքի և զրպարտության համար փոխհատուցման չափի առաջարկվող բարձրացումն անհամաչափ է և կարող է վտանգել մամուլի ազատությունը՝ այդ չափի փոխհատուցման կիրառման դեպքում անհնարին դարձնելով առանձին լրատվամիջոցների գործունեությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ վիճարկվող Օրենքը մտահոգություն է առաջացնում այդ կարգավորումների համաչափության, հետևաբար նաև հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու և գործնական կիրառության արդյունավետության տեսանկյունից:

Սույն գործով Սահմանադրական դատարանը 2021 թվականի հոկտեմբերի 5-ին կայացրել է թիվ ՍԴՈ-1612 որոշումը, որով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող¹³⁰:

¹³⁰ Հասանելի է <https://concourt.am/decision/decisions/sdv-1612.pdf> հղումով:

